

Ltn

✓ 1335

1999 - 2

95

ԳԱՐՆԱՆ ՄԻ ԱՍՈՒՊ

ՀՈՐԱՎԷՊ

ԳՐԵՅ

ՍՐ. ՄԵՆԻՎ

(պէ. Քաղ. Դ. 11 - Երևան)



ԶՄԻՒՆԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Մ. ՄԱՄՈՒՐԵԱՆ



1883

1611

ԳԱՐՆԱՆ ՄԻ ԱՍՈՒՊ

ՆՈՐԱՎԷՊ

ԳՐԵՑ
ՓՐ. ՄԵՆԻՆ




ԶՄԻՒՆԻԱ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Մ. ՄԱՄՈՒՐԵԱՆ

1883

ԳԱՐՆԱՆ ՄԻ ԱՍՈՒՊ

Ա.



Կան վարկեաններ ուր մարդս անխաբիւրդէ քործով գրաւ
ղելու, ուր մտածութիւնները տարտամեն, և յիսկսի մի զգաց-
մունք ունի որ ինք՝ իրեն խոստովանել չուզեր: Այս վիճակին մէջ
էր օրիորդ Պերճեան: Քիչ մը առեն պտտեցաւ սենեակին մէջ,
վերջը յանկարծ կեցաւ պատուհանին դիմաց, նայեցաւ վար,
ծռեցաւ, և պարտէզէն դէպ ի վեր գալարւող յասկիներուն
մէկը քաղեց. դարձաւ նստաւ գրասեղանի մը քով, և այս նա-
մակը գրեց.

«Կ. Պոլիս, 3 Մարտի 187 . . .

«Ահա՛ քեզի, սիրելի բարեկամուհիս, դարնան յասկի մը,
» պահէ՛ եթէ քու սատանայ տղադ՝ նամակս կարդացած վիճելիդ
» կտոր կտոր չընէ՛ զայն: Ես արդէն իրեն սրդ ողած եմ, վասն
» զի քու բոլոր բարեկամական զգացմունքդ, յիշատակներդ, ա-
» մեն ինչ կողոպտեր է: — Տան մէջ մինակ եմ, կամ գրեթէ,
» մայրս գնացեր է այցելութեան, հայրս վերը կ'ալխատի, եղ-
» բարքս Աստուած դիտէ ուր եմ: — Կը պառաւնամ, սիրելիս,
» երկու օր առաջ 20 տարեկան եղայ. գեղեցիկ ամսուան մէջ
» ծնած եմ, անոր համար շատ կը խնդամ, բայց երբեմն կու լամ
» նաև առանց պատճառի . . . :

«Այս մէկ քանի օր շատ զբաղած էի վարդ ստրկելով, նայե-
» լով թէ ինչպէս շաքար կը կռեն, անուշներու համը փորձելով
» և մօրս տաղանդը գովելով: Եւ երկայն չըջադ այսութիւնք. գի-

28 1338

41335-60

» տեւմ թէ այդ չիտակ ճամբուն վրայ կարգաւ քանի՞ ծառ կայ,
» ո՞ր կողմն է ամենէն գեղեցիկ տեսարանը, ո՞ր են առանձին
» տեղումք, ո՞ր բազմութիւնը կը յաճախէ:

«Աղէկ միտքս եկաւ. կարելի է կարգացեր ես հայերէն լրա-
» գիրներու մէջ որ Պ. Գ. Գեղարդեանց, Մոսկուայի համալսա-
» րանի բուֆէսէօրներուն մէկը՝ որու մասնագիտութիւնը պատ-
» մութիւնն է, եկեր է Պօլիս, չղիտեմ ինչո՞ւ: Օրուան այդ դիւց-
» աղունը ես տեսայ. մեղի եկեր էր: Արքայութի մտնելու սրա-
» հը՝ ուր գինք ընդուներ էին: Հմուտ մարդ մը՝ յարգելի անձ մը
» միշտ քիչմը ակնածութիւն կ'ազդէ, բայց երբ մտայ բաւական
» զարմացայ տեսնելովոր այդ անձն չատ յարգելի չէր, գոնէ ե-
» րիտասարդ էր այդ ածականին համար: Միայն հանդարտ կերպ
» ունէր և բարի նայուածք մը որ զիս հաշտեցուց իրեն հետ: Փո-
» խադարձ մէկ երկու քաղաքավարական չարժմունք և խօսք,
» վերջը՝ նստայ մտիկ ըրի: Մտիկ ընելը լաւ բան է, խօսելու
» պարտքէն ազատիլն է, այնպէս չէ: — Բայց հիմա ի՞նչ երկար
» խօսեցայ քեզ հետ . . . մնաս բարով. քոյրս միշտ քեզ կը հար-
» ցընէ և կը բարեւէ: Համբուրք խմկողմէս զաւակդ այնպէս ինչ-
» պէս գիտես դու գինքն համբուրել: Միշտ քոյդ»

«ՍԱԹԻՆԻԿ»

Երբ այս տողերը գրեց, աւելի հանգստացաւ, և սիրտը ա-
ռաջուան պէս չէր ճնշուեր:

Սաթինիկ կը պատկանէր Պօլսոյ այն կարծուածէն աւելի բազ-
մաթիւ ընտանիքներուն, որոնց կեանքը հանգիստ է և զիւրու-
թեամբ կ'անցնի, ոչ իրենց հարստութեան պառտճառաւ, այլ ի-
րենց խնայողութեան և գործունէութեան համար: Իրաւ, ի՞նչ-
չափ անկումներ, ի՞նչչափ նեղութիւնք այս վերջին տարիներուն
մէջ, քանիներ որոնց ապրուստը պակսեցաւ, և քանիներ որոնց
ապրուստը բոլորովին ոչնչացաւ, երիտասարդութիւն որ գործ-
չունի և տղայութիւն որ դաստիարակուելու միջոցներ չունի —
բայց դարձեալ այդ ընտանիքներն կան, մայրն է որ ամեն բան
կը հոգայ, աղջիկն է որ կը կարէ, հայրն է որ կ'աշխատի, մաք-

րութիւնը՝ Պօլսոյ և Զմիւռնիոյ մաքրութիւնը որ միայն կրնայ
բաղդատուիլ գերմանական կամ հոլանտական մաքրութեան
հետ — կը տիրէ տան մէջ, Այս տնական կատարելութեանց վը-
րայ պէտք է աւելցնել նաև այն նրբութիւնը որ միայն դաստի-
արակութիւնը կրնայ տալ: Այդ դաստիարակութիւնը և կրթու-
թիւնը չէին զլացեր Սաթինիկի, մանաւանդ որ ամենուն չիա-
ցածն էր: Ինք այդ կ'ըզգար և դո՛ւ էր սիրուած լինիլ ամենէն,
այդ իր առաջին փափաքն էր: Եւ անոր համար, առանց կեղ-
ծաւոր լինելու, ամենուն համար փաղաքանքներ կը գտնէր:

Հայրը տէրութեան պաշտօնեայ էր: Նորա ուղղութիւնը ա-
մենուն յայտնի էր: Արդէն չափահաս տարիքն անցուցած, մի-
այն մէկ ուղեցոյց ունեցեր էր — պարտիքը: Եւ ո՞վոր կը հետևի
իւր պարտուց, կատարեալէ՝ որքան կարելի է կատարեալ լինիլ:

Սաթինիկ ձեռագործով մը զբաղեցաւ. վերջը սկսաւ նախ
արևուն, որ կամաց կամաց անյայտ եղաւ հորիզոնէն՝ կարմիր
գոյներ թողլով երկնքին վրայ: Ամենուն դալը, ընտանեաց ժող-
վուկը, ընթրիքը, նոր օրագիրներ. այս ամենը զբաղեցուցին
գինք: Այսպէս սովորաբար կ'անցնէին իր օրերը, մէկ մասն ի-
րենց տան մէջ, միւսը իր մեծ քրոջ մօտ, որուն երկու զաւակաց
հետ այնպէս կը խաղար որ կարծես թէ իրենցմէ պզտիկ էր: Հոն՝
իր երկրորդ զուարճութիւնն էր քրոջը հետ կատակներ ընել:
«Գու, կ'ըսէր իրեն, աղնուապետական ես, քու քայլերդ չա-
փուած են, թէ քեզ և թէ ուրիշներու համար խիստ ես, հա-
գուստդ վայելուչ՝ և միայն վայելուչ պիտի լինի: Քու զաւակ-
ներդ պէտք չէ շատ պոռան (քու կարծիքովդ, թէ և անոնք դար-
ձեալ իրենց գիտցածը կ'ընեն) և ծառաներդ պէտք է զգոյշ
չարժին և պնակներու ձայն չհանեն: Քու տունդ վաղքի մը պէս
կանոնաւոր կը լինէր, եթէ ես չգայի չորս կողմը տակն ու վրայ
ընելու . . . » Իսկ Մաքրուհի կը ժպտէր, կը մաղթէր որ օր մը
ինքն ալ հանդարտի, և երբ Սաթինիկ ամբողջ օրը կը խօսէր,
կը խնդար և քեռորդուց հետ կը խաղար և տուն կ'ուզէր դառ-
նալ, «Տունը հիմա հանգչած էին, կ'ըսէր քոյրը. հիմա պիտի
երթաս նորէն խեղճերուն գլուխը ցաւցընես:»

Բայց այս աշխուժութիւնը կարծես արտաքին էր. արդէն բաւական ատենէ ի վեր մեծ փոփոխութիւն մը եղած էր իր բնաւորութեան մէջ, և շատ անգամ երբ դէպքը կը ժպտէր, սիրտը նոր տխրութեամբ մը լի էր: Բնադրմունքն էր որ կ'արթննար, ընթերցմանց հետեւանքն էր — վասն զի այդ փոքրիկ գլխին մէջ խառնուրդ մը կար թեթեւ և լուրջ գրութեանց, պատմութեան և վէպերու, աղբային և օտար լրագրաց ամենէն ծանր յօդուածներու և ամենէն յիմար բանասիրականներու:

Իսկ հիմա, քանի մը օրէ ի վեր, մտադրաւ — ինք որ սովորաբար կը խորհէր թէ իր պատուհանին թաղարին մեխակը երբ պիտի բացուի, կամ ի՞նչ գոյն ձեռնոցներ յարմար է դնել իր նոր հագուստին հետ, և այսպէս ծանրակշիռ նիւթերու վրայ — կը մտածէր և կ'ըսէր ինքնիրեն, թէ ամենէն բարձր՝ ամենէն գերադոյն բանը չէր այս աշխարհքիս վրայ ներշնչել երկրասարդութիւնը, պատմել իրեն թէ մթին և անյայտ սկիզբներէ ի վեր մարդկութիւնը ի՞նչպէս երբեմն բարձրացեր է և երբեմն ցած և անպիտան եղեր է, թէ ի՞նչ դասեր կան այդ անհուն անցեալին մէջ. թէ բնութենէ լաւ օգտուած լինիլ է ունենալ հմտութիւն և յիշողութիւն բոլոր ազգաց ծագումները՝ ժամանակագրութեան թուականները, պատերազմները՝ ոճիրները՝ առաքինութիւնքը զիտնայու և դատելու չափ... բայց երբ քրօջը հետ կը խօսէր բարձրաձայն, կ'ըսէր թէ՝ «Չարմանալի՛ է, ինչպէս նոր բանը՝ նոր մարդը ամենուն հետաքրքրութիւնը և համակրութիւնը կը շարժեն: Այդ ձեր Բոօֆէսէօրը թող մնայ հոս տարի մը և շուտ կը մոռնան զինքը:» Բայց ինք՝ չէր մոռնար: Երբ կը մնար մինակ, ուշ ատեն, կարծես նորէն կը լսէր խաղաղ ձայնի մը հնչումը որ ամեն նիւթի վրայ կը խօսէր՝ կը պատասխանէր ամենուն բնական կերպով և կը յիշէր երկու սեւ աչքերու մութ փայլը, որ դամենը կը դիտէին, բայց ոչ չարութեամբ, ընդ հակառակն, ի՞նչպէս քաղցր էր իրենց նայուածքը...

Օր մը Մաքրուհի ըսաւ իր քրոջ.

— Գեղարդեանց այս ամառ հոս պիտի անցընէ ծով մտնելու համար, ինչպէս բժիշկները խորհուրդ տուեր են:

Աչքերնիս լոյս, պատասխանեց Սաթինիկ՝ գլուխը պատուհանին դարձնելով և իբր թէ փողոց նայելով, մեծ մարդու շնչած օդը պէտք է շնչենք:

— Հեզնութիւններդ քեզի պահես աւելի աղէկ կ'ըլլայ:

— Որո՞ւն վնաս կու տամ այսպէս խօսելով. դու գիտես որ ամենուն պաշտածները ես չեմ ուզեր պաշտել:

— Թողունք քու ուղածներդ և չուղածներդ: Ըսէ՛ տեսնեմ, պատրաստեցի՞ր այն նամակները և ընկալադիրները որ քեզ յանձնէր էի գրել:

— Բոլորովին պատրաստ, Տի՛կին, ինչպէս ես միշտ պատրաստ ձեզ հնազանդելու:

— Եթէ հնազանդելու պատրաստ ես, դնա՛ վաղը առտու մեր դպրոցը. փոքր դասատան վարժուհին հիւանդ է, երկու դաս պէտք է տալ, դո՛ւ տուր:

— Ես ի՞նչ գիտնամ ի՞նչ դասագիրք ունին այդ պղտիկ աղջիկները, և ո՞վ գիտէ, զիս պիտի սեպեն, ըսածս մտի՛կ պիտի ընեն, և մէջերնէն քաջերը կարելի է լեզու նաև հանեն կռնկէս...: Ա՛հ, քեզ աղէկ կը ճանչեմ, ամեն օր՝ ամեն գիշեր մէյմէկ այդ տեսակ գաղափար կը ծնանիս: Շիտակ ըսէ, չէս յողմիք բոլոր այդ թուղթերու ծրարներէն, այդ ժողովքներէն ուր իրարու ըսածն չեն հասկընար, այդ դպրոցներու սրահներէն ուր միշտ շունչի հոտ կայ, ուր միշտ բազմութիւնը շատ է և տեղը քիչ, ուր ձայները ականջ կը խցընեն:

— Եթէ տեղը պղտիկ է և բազմութիւնը շատ, պէտք է ջանալ և յուսալ որ տեղը մեծցընենք, ոչ թէ նստինք տունը և ըսենք թէ չունչի հոտ կայ: Սիրենք մեր ազգին այդ խեղճ զաւակները...: Անձնասիրութիւնը...:

— Ա՛ղապսեմ, բաւական է, խնայէ՛ զիս: Ա՛րթամ, կ'երթամ: Քանի՞ ժամ և քանի՞ օր պիտի տեսնայ այդ դասերը:

— Օրական երեք ժամ. մինչև վարժուհին առողջանայ պէտք է երթալ:

— Ուրեմն մնաս բարձր, տուն փախչիմ, եթէ երկայն մնամ, ո՛վ գիտէ ի՞նչ նոր նոր դասեր, ի՞նչ օրինակելու կանոնադրու...

թիւն, ի՛նչ յանձնարարութիւնք կը հնարես:

— Խենթ աղջիկ, ըսաւ քոյրը զինքը համբուրելով,

Բ.

Երկրորդ օրը Սաթինիկ իր խոստմունքը կատարեց: Երկու երեք օր էր արդէն որ կ'երթար այդ դասերը տալու: Առաջին դասը՝ պզտիկներ էին որ կը կարդային հեգելով և կմկմալով: Երբ վերջացուցին իրենց կարդալը, չորս կողմը շարունեցան իւրենց սե կամ խարտեալ գլուխները երկնցընելով ու նայելով թէ ի՛նչ թուանշան կը դնէր. իսկ ինք իւրաքանչիւրին անունը կը հարցընէր, և այդ շնչկոցին մէջ միայն իր ձայնը երբեմն կը լսուէր: Պատուհաններէն արևի ճառագայթներ մտնելով՝ թէ մաքուր և գոյնզգոյն հագուստներ և թէ ցնցոտիք կը լուսաւորէին: Երբ ամենուն թիւերը դրաւ, յայտնի դո՛ւրսեմա՞ր «բայրի եկաք» ըսաւ և գլուխը վերցընելով ուզեց նայիլ աշակերտուհեաց երթալուն, բայց յանկարծ զարմացած մնաց տեսնելով դրան մէջ կեցած գպրոցին խնամակալ մէկ երկու տիկնայք և Գեղարդեանց . . . իր քոյրն ալ մէկտեղ էր: Չանաց իր զարմանքը ծածկել և անտարբեր քաղաքավարութեան կերպն առնելով բարևեց: Նախ նոքա մտան և նստան. վերջը երկրորդ դասի աղջկաները ներս մտան: Խեղճ Սաթինիկ դժուար վիճակի մէջ էր. միտքէն կ'ըսէր. «Այդ մարդը որ Դիւաններու աշխարհքէն կու գայ, ի՛նչ պիտի ըսէ իմ դաս տալուս:» Քերականութեան ցամաք դաս մը կար ուր աշակերտուհիք շատ մը բառեր հոլովեցին, և ինք բացատրեց լեզուի զանազան կանոններ: Եւ իրաւ, արդեօք ի՛նչպէս կը դատէր այդ հմուտ մարդը՝ անփորձ աղջկան մը տուած դասը. ինք որ շատ անգամ իրեն տալից մարդկանց դասախօսած էր: Այնպէս կը գտնէր Գեղարդեանց թէ քերականութեան այդ ապերախտ դասը տուողին ձայնը այնպէս անոյշ էր և համոզիչ որ իր աշակերտները զիւրօթեամբ պիտի սովորէին մալբայի և չաղկապի տարբերութիւնը:

Երբ Գեղարդեանց օրիորդ Պերճեանը առաջին անգամ տեսներ էր իրենց այցելած օրը, աւելի մեծերու հետ խօսելու և վիճելու զբաղած՝ իրեն ուշադրութիւն չէր ըրեր: Սաթինիկ գացեր անկիւն մը նստեր էր: Դասը վերջացաւ, ոտք ելան ամենքը. հիմա աւելի քաշուողը երիտասարդն էր, որ Սաթինիկին կը յայտնէր իր հաւանութիւնը և կը գովէր նորա եռանդը: Այս «եռանդ» բառին քիչ մնաց որ Սաթինիկ իւր բոլոր ծանրութիւնը կորցընէր և խնդար, բայց ինքզինք զսպեց և աչքին ծայրով քրօջը նայեցաւ . . . :

Գ.

— Այո՛, Օրիորդ, բոլոր ձեր անմեղդ աղանիքները զիտենք, կ'ըսէր Մաքրունի քանի մը օր վերջ իր քրոջը հեղնական քաղաքավարութեամբ. զիտենք, օրինակի համար, որ եթէ վարի՝ ծովեղերեայ ճամբէն մարդ երթայ դէպի դպրոց (անչուտ, ի՛նչ հարկ կայ վերէն երթալու երբ ծովէն այնպէս զովացընող հով կը միչէ) հիւանդներու կը պատահի որ կ'երթան ծով մտնելու, և ես կ'երևակայեմ որ հիւանդներու համար ամենէն օգտակար դեղն է քաղցր ժպիտով բարև մը . . . :

— Պէտք է խօսքդ ետ առնես, պատասխանեց Սաթինիկ կռուելու պատրաստ. ես քանի՞ անգամ անցեր եմ այն ճամբէն, կամ որո՞ւն պատահեր եմ: Ապահով եղիր, ես եթէ զգած նաև, և զիտցի՛ր որ շատ դժուար կրնամ զգալ, իմ զգացմունքս ուրիշները պէտք չէ իմանան:

— Ես «ուրիշ»ներէն եմ:

— Օտար չես, բայց ուրիշ ես, վերջապէս իմ անձս չես: Ես զիտեմ քու այդ խօսքերդ ի՛նչ աղբիւրէ կը բղխին: Գիտեմ՝ որ մեր զրացի Տիկին . . . Տիկին թէ Օրիորդ, ի՛նչպէս ըսեմ . . . Թաղոսեանը շատ պատուական նպատակներ ունեցող անձ է . . . :

— Աղէկ, աղէկ, այդչափ դիւրադ գած մի՛ լինիր. կ'ուզեմ որ քեզ հաշտեցընելու համար բան մը գտնեմ: Միւս կլրակի միտք

ունինք շողենաւով երթալու Պ... բազմութեամբ, երեք չորս
ընտանիք. և հոն ոչ միայն կը ճաշենք, այլև կ'ընթերենք, լուսնի
լուսով կը դառնանք և . . . :

— Եւ կը քնանանք . . . : այդչափ բաներէ վերջ՝ միայն այդ
կը մնայ ընելու. դու գիտես որ իմ կարծիքովս այս աշխարհքս
աւելի կիսկատար ստեղծուած կը լինէր եթէ քունը չըլլար :

— Ա՛ղաչեմ, Սաթինիկ, յանձնառու եղիր այս կիսկատար
աշխարհքը կատարելագործելու . . . : Գեղարդեանց ալ հրաւի-
րուած է :

— Ո՛վ քեզի հարցուց որ կ'ըսես, և ինձ ի՞նչ : Ուրիշ ո՛վ պիտի
գայ. հաւանական թէ Բ... երբ, և Ե... երբ . . . :

— Այո՛ նաև Մանաւազեանները :

Եւ իրենց այն երկար տղան որուն միտքը գիրքերու ցանկ մի
է և խօսակցութիւնը յատուկ անուանց բառարան մը. և ան-
չուշտ պիտի վայելենք նաև օրիորդ Թադոսեանը որ իր տգեղու-
թեան վրէժը մեր ամենէն պիտի առնէ . . . :

— Ո՛վ իմ բարեսիրտ քոյրս :

— Մաքրուհի, ըսէ՛, երբէք, երբէք մեծ դառնութիւն մը,
գրեթէ ատելութիւն մը չէ՞ս զգացեր անոնց դէմ որ սուտեր կը
գրուցեն, անոնց դէմ որ չար և չարալեզու, անոնց որ անխելք
կերպով հպարտ են :

Քոյրը զարմանքով նայեցաւ, մտածեց քիչ մը և պատասխա-
նեց.

— Չէ՛, կարծեմ . . . : երբէք չէ՛, եթէ այդ ատելութիւնն
զդայի, իրենց կը հաւասարէի :

— Ուրեմն, երանի կ'ու տամ քեզ :

Դ.

Սաթինիկ՝ շատ առտու կը տեսնէր իր զբացի օրիորդ Թա-
դոսեանը որ կ'իջնէր պարտէզ-ճաղիկներ ջրելու և տերևներուն
որդերը մաքրելու : Այս էր իր անցեալ և ներկայ միակ բարի

գործը : Խեղճը՝ քառասունն անցած՝ առանց յիշատակի և առանց
ապագայի սիրտը խիստ և աչքը չոր, ոչ թէ այն պառաւ աղ-
ջիկներէն էր որ իրենց ընտանիքին օգնութիւնն են և առանց
բնապէս մայր լինելու՝ բարոյապէս մայր են, այլ անոնցմէ որ
հետաքրքրութիւն և շատախօսութիւն իրենց բան գործ ըրած
են : Երբեմն այս երկու տեսակներուն խառնուրդն ալ կը գտնուի,
և հազուադիւր չէ :

Իրաւ էր Սաթինիկի ըսածը. կարծես թէ վրէժ կ'առնէր ա-
մենէն, իր գեղադուլութեանց վրէժը : Ինչո՞ւ չէր ամուսնացեր.
ինչո՞ւ սովորաբար չեն ամուսնանար աղջիկները (դարձեալ մեծ
մասը կ'ամուսնանան, այդ ուրիշ խնդիր) : Անոնք որ իրենց կը
հաւնին՝ իրենք չեն հաւնիր, և անոնք որ աւելի բարձր են զիր-
քով կամ ո՛ր և է արժանիքով՝ մինչև իրենց չեն խոնարհիր : Բայց
սորա կեանքին մէջ եղած էր ուրիշ պատճառ մը նաև, աւելի աղ-
նիւ պատճառ մը. ինք ունէր բաւական ստացուածք իր ծնող-
քէն մնացած, մտածեր էր թէ ո՛վ զինքն ուզէր այդ տգեղու-
թեամբ՝ իր դրամը կ'ուզէր : Եւ ինքնիրենն ըսեր էր. «Յո՛ գիտ
չեմ ծախեր :» Եղեր էր օր մը ուր փակուեր էր իր հայրենական
տունը, իր փոքր քոյրը և մայրն ալ մեռեր էին և ինք մնացեր
էր մինակ, բոլորովին մինակ . . . և հեռաւոր ազգականներու
տուն ապաստան փնտռեր էր :

Սաթինիկ այդ պառաւ աղջկան հետ ծածուկ պատերազմ մը
հրատարակած էր. նորա կէս սուգի մանուշակադոյն զլխարկ-
ներուն վրայ կը խնդար և շատ «սրտաչարժ կը գտնէր» և կ'ը-
սէր թէ նորա հազուստներն այնպէս վարպետութեամբ բամբա-
կով կարուած էին որ ամեն սուր անկիւններ կը ծածկուէին :
Բայց օրիորդ Թադոսեան ետ չէր մնար և իր ամեն մէկ տղա-
յութիւնը մշտնէկ լրբութեան պէս կը հռչակէր :

Մէկն ալ կար որու հետ բարեկամ չէր Սաթինիկ. Պարոն Մա-
նաւազեանց երիտասարդն էր այդ. «Տէր Աստուած, կ'ըսէր,
ինչ թեթեւօթիկ է այդ տղան որ քացախ կը խմէ դուռնատուե-
լու համար, որ շատ մը հեղինակներ բերնուց գիտէ, մինչև ան-
գամ ոտանաւորներ կը գրէ, և որո՞ւ վրայ, իմ վրաս նաև . . . :»

Հայրը կը պատասխանէր քիչ մը խտուրթեամբ թէ քաջախ խմբելու ոչ ոք չէր տեսած, թէ հեղինակներ բերնուց գիտնալը մարդուս պատիւ կը բերէ, իսկ իր վրայ ոտանաւոր շինելուն համար պէտք էր ջնորհակալ լինէր: Իրաւ է որ այս վերջին մասը գաղտնի կերպով կը փաղաքէր իր սիրտն ալ, բայց հակակրօթիւնը դարձեալ կը յաղթէր. չէ՛ղէ՛կ բարեկամ մը ունենալ շատ անախորժ է, մանաւանդ կնոջ մը համար: Ի՞նչ, կարելի բան էր արթուն ժամանակ երազներ տեսնել, գիրքերու մէջ ապրիլ և չիմանալ թէ այս խեղճ հոգազունը ի՞նչպէս կը շարժի, և խօսելու ժամանակ հին և նոր բանաստեղծութեանց բոլոր զիւցազուները համբել . . . :

Արիւնքի օր, իր այս երկու հակակրօթեանց հետ պիտի անցնէր, բայց այդ կը մոռնար. ինք միայն կը մտածէր թէ շողեւաւ պիտի նստէր, մէկ երկու բարեկամուհիներու հետ պիտի զուարճանար, Պաֆօրը պիտի տեսնէր բոլոր իր երկայնութեան մէջ և գարնան ծաղիկներու անհուն հարստութեամբ, թէ անշուշտ պայծառ օր մը պիտի լինէր այդ կիրակին, և իրիկունը լուսինն աւելի քաղցր պիտի փայլէր քան թէ ուրիշ գիշերներու և թէ . . . զուշակեցէ՛ր ու առձեալ ի՛նչ . . . :

Ե.

Արիւնքի էր. ի՛նչ լաւ է լինիլ երիտասարդ սարիներով և զգացմունքով, գլուխը երազներով լի և սիրտը յոյսերով, սիրել ամեն բան որ հաճոյք կը պատճառեն մեր աչաց և բնաւորութեան, դաշտերը՝ ծովը՝ ծաղիկը որ կը քաղենք՝ պտուղը որ կ'ուտենք, վերջապէս նայիլ դո՛հ կերպով իր պղտիկ հայիլին, տեսնել երկու փայլուն աչքեր, ոսկի գանդուր որ դէմքը կը պսակեն, չրթունք որ ուրախ կարծես թէ յաղթական կերպով ժպտելով ձերմակ ակումներ ցոյց կու տան, և դուրս ելնել դուարճանալու փափաքով:

Նաւամատոյցին վրայ են բոլոր մեր ծանօթները, շողեւաւը

կը մօտենայ, խոշոր մարդ մը կը պռուս կարգաւ այն գիւղերուն անուաները ուր շողեւաւը պիտի հանգիտի: Բազմութիւնը մեծ է, ժողովուրդը իրար կը հրեն: Ո՞վ չճանչէր մեզմէ՞ Պօլտոյ այդ մեծ խառնուրդը, ո՞վ չլսեր գրեթէ ամեն օր այդ մեծ շնկոցը ուր միանդամայն կը խառնուին Թուրքին՝ Հայուն՝ Յոյնին՝ Հրէին և Եւրոպացւոյն ձայնը և հնչմունքը, ուր դեռ կարելի է տեսնել Արեւելքի ինչպէս Արեւմուտքի տարազը: Գարեգին Գեղարդեանցի համար այդ ամենը նոր էին: Իր միտքը դրած էր որ իր ճամբորդութենէն օգուտ քաղէ, ամեն հնութիւն և նորութիւն քննէ, ամեն տեսարաններու և ամեն էակներու ծանօթանայ, անցնի նաև Եգիպտոս ձմեռ մը ապրելու և բուրդ երբ բարեկրօթ համար և վերջը վերադառնայ Թիֆլիս ուր իրեն կ'ըսպասէին թերևս նպատակներ և ապագայ՝ որ շատ կարելի է փայլուն լինէր: Մեծ հաճոյք կ'իմանար նայելով երկու եգիպտացիներ, Երեմիայի մօտ իրարու որ կարծես գետի ափունք էին, և ամեն վայրկեան տեսարանը կը փոխուէր, և այդ տեսարանը մոգական էր: Անտարբեր խօսակցութիւններ էր լինէին ատեն ատեն չորս կամ հինգ ընտանեաց մէջ որ կ'երթային Պ . . . և վերջապէս հասան:

Հատ ախորժակով ճաշեցին, մինչև անգամ Պ. Մանաւագեան շատ կերաւ և ըսաւ թէ Եկեղեցին սխալէր էր որ կրամոլութիւնը մահացու մեղքերու կարգին մէջ դնելով:

Մարտելու համար «մածուն ծախեմ» խաղացին, և Սաթիւնիկ զարմանալի կը գտնէր որ համալսարանի մը մէջ դասեր տուողը այդպէս խենդութիւններ ընելու զիջանի:

Սաթիւնիկ քրտնած էր և ծարաւ. դաւաթ մը առաւ, և մինակ ինքնիրեն հեռանալով՝ գնաց ջուրին մօտ, որ խիտ ծառերէ չըջապատուած և քիչ մը փոս իջած էր: Այնպէս զովէր հոն, այնպէս անուշերեցաւ իրեն ջուրի խոխովը, և այնչափ դժուար պիտի լինէր իր բարակ կօշիկներով աղբիւրէն դոյացած ցեխերուն մէջ կոխելով ջուր առնել, որ մտածեց թէ վնասակար էր քրտնած ջուր խմելը և կոտրած ծառի մը բունին վրայ նստաւ: Քանի մը վայրկեան հանդատանալէ վերջ, ծարաւը սաստկացաւ,

այն ոտեն ինքն ալ դաւաթը և քաջութիւնը ձեռք առաւ . . .
 երեք հատ մեծ քարեր կախն ցեխին մէջ դրուած, առաջինին
 վրայ կոխեց, յետոյ երկրորդին վրայ . . . բայց երկրորդը լաւ
 դրուած չէր, ոտքը կը սահէր այդ ծուռ քարին վրայ, — «Առաջ
 » երթալ դժուար է, ետ դառնալ աւելի դժուար, Օ'րիորդ » ը-
 ասա անախորժ ձայն մը Սաթինիկի ականջին համար: Մանաւազ-
 եան մօտեցաւ իր երկայն թեւը և չոր ձեռքը երկնցընելով: Մեր-
 ժեւու ժամանակ չէր. օրիորդ Պերճեան ցատկեց անցաւ միւս
 կողմը. երբ իր խոնարհ ասպետը իրեն ջուր կը բերէր, ինք կը
 մտածէր թէ ինչ ծաղրելի բան պէտք է լինի երբ աղջիկ մը տա-
 րակուսած կեցած մէկ ոտքը քարի մը վրայ դրած՝ միւսը օդին
 մէջ՝ ձեռքով զգեստն կը ժողվէ . . . բայց Մանաւազեանի կար-
 ծիքն այդ չէր, և կ'ըսէր իրեն թէ այդ չիօթութեան վիճակին
 մէջ ինք անդիմադրելի էր: Իսկ Սաթինիկ միայն իր տուած ջու-
 րը խմեց առանց ըսածները լսելու. միշտ կը շարունակէր մտա-
 ծել . . . « Եթէ ուրիշ մը՝ միւսը՝ նա վերջապէս դար և տեսնէր,
 » ո՛հ, այն ատեն, ինչ ամօթ բան » . . . : Սկսաւ գրեթէ վազել
 այն տեղաց ելնելու՝ ազատելու համար, մինչ Մանաւազեան կ'ը-
 սէր. « Ի՞նչ շուտ կը քալէք, Օ'րիորդ: »

Դիմացնին ելան աղջիկներու և երիտասարդներու խումբ մը,
 որոց մէջ էր և Բեւա, որ Սաթինիկի կարծածին չափ հեռու չէր:

— Սաթինիկ, ես քիչ առաջ քեզ փնտուեցի, ըսաւ ընկերնե-
 րէն մէկը: Դու հո՞ս էիր:

— Այո՛, ինչպէս կը տեսնես, ջուր խմելու եկեր էի . . . :

— Եւ երբ . . . կ'ըսէր Մանաւազեան . . . :

— Եւ երբ՝ ցեխին մէջ պիտի խնայի, ընդմիջեց Սաթինիկ,
 Մանաւազեան էֆէնտի ծառերուն մէջէն դուրս ելնելով հաճե-
 ցաւ իր ձեռքը երկնցընել և զիս այդ վտանգէն ազատել: Դուք
 ինչ կ'ընէիք:

— Մենք, ըսաւ օրիորդներուն մէկը կարող կերպով, կը վի-
 ճէինք Գեղարդեանց էֆէնտիի հետ . . . :

— Ինչի՞ վրայ:

— Ամեն բանի:

— Այդ բաներուն մէկը կամ երկուքը:

— Նախ, Պօլիս աղէկ է թէ Թիֆլիս:

— Տատ կարելի է որ էֆէնտին ըսած լինի թէ Պօլիս անհե-
 քելի կատարելութիւն մը ունի. շունքը լի են, և այդ սահա-
 նութեան և մաքրութեան պատրաստ միջոց է:

— Չարածիճիկ, ինչպէս ալ գիտցար:

Դարձաւ Սաթինիկ դէպ ի Գեղարդեանց և խնդարով ըսաւ.

— Կ'երեւակայէի որ դուք ալ Պօլիս այցելող ամեն ազգի ճամ-
 քորդներու պէս այս կարծիքը պիտի ունենայիք. բայց մէկը
 թողով շունքը, ինչպէս կը գտնէք մեր Պօլիսը:

— Ես ևս « ամեն ազգի ճամբորդ » ներու նման այնպէս կը
 դտնեմ որ Պօսֆօրը շատ գեղեցիկ է, նաև անոնց համար որ Ն-
 տալիա ման եկած են:

— Իսկ Պօլսոյ մարդիկը՝ մանաւանդ թէ Հայերը, հարցուց
 Սաթինիկ:

— Մարդ իկը . . . պատասխանեց, մի և նոյնն են ամեն տեղ,
 միայն դաստիարակութեամբ և սովորութեանց տարբերութեամբ:
 Երբեմն մէկ կողմը աւելի պակասաւոր է, երբեմն միւսը. նոյն-
 պէս երբեմն մին աւելի կատարեալ քան միւսը:

— Կ'երեւի թէ դուք շատ ներողամիտ էք ձեր հայրենակցաց
 բաղդատմամբ. ես մեծ հետաքրքրութիւն ունիմ՝ Կովկասի մէջ
 կամ Ռուսաստան տպուածները կարդալու. և կը տեսնեմ թէ
 չգիտեմ ինչ Աստուածային կամ մարդկային իրաւունքով կովկա-
 սեցիք կ'ըսկսին զիրենք մեր վարպետներն համարիլ, կարելի է
 Աւետարանին խօսքն ուղեն հաստատել: Նղիցին առաջինը յե-
 ալինք՝ և յետինը առաջինը:

— Արհաւիրեմ ձեզ, չէի գիտեր որ պօլսեցի օրիորդները
 այսչափ տեղեակ են թէ Քրիստոսի խօսքերուն և թէ Կովկասի
 թերթերու ըսածներուն:

Սաթինիկ կարմրեցաւ, բայց իր բնութեան մէջ նահանջել
 չկար:

— Դուք կարելի է ինձ՝ խոհեմութեան դաս մը տալ ուղե-
 ցիք, բայց խօսքիս պատասխան չտուիք:

— Կուղէք սր անկեղծութեամբ ըսեմ, Օրիորդ. պօլսեցիք մեծ սրբազրուութեան պէտք ունին, մէկ երկու անգամ գտնուելով իրենց ժողովքներուն մէջ այն մտածութիւնն ունեցայ թէ այդ բազմութեան մէջ քանի հոգի մարդիկ էին, և քանի տղայք. բայց թիֆլիսեցիք, վասն զի Թիֆլիսն է Կովկասու Հայոց կեդրոն, այդ սրբազրուութեան պաշտօնն յանձն առնելու համար դեռ շատ տհաս են. միայն ապագան պիտի որոշէ, թէ ազգին այդ երկու մասերէն ո՞վ կը լինի աւելի յառաջադէմ և աւելի օգտակար:

Խօսելով կը քաշին, Սաթինիկ և Գեղարդեանց բաւական առաջ դնացեր էին, իրենց կը հետեւէին Մանաւադեան և ուրիշներ: Սաթինիկ երբեմն կը ծռէր և ծաղիկներ կը քաղէր: Նրկուքն ալ կը լռէին: Իրենց լռութիւնը անախորժ ազդեցութիւն ըրաւ երիտասարդին վրայ, այնպէս թուեցաւ իրեն որ պէտք էր օրիորդ Պերճեան դարձեալ խօսէր, միշտ խօսէր որպէս զի մեծ դաշտը լուռ և մութ և անհամ չմնար: Թէև դաշտը այնչափ լռին չէր. բոլոր աղջիկները ահագին աղմուկ մը կը հանէին, կը պոռային, կը խմբային, և մօտակայ ձորը՝ իրենց սուր ձայներուն երբեմն արձագանք կու տար:

— Սպասենք որ անոնք ալ հասնին մեզի, ըսաւ աղջիկը, մենք հեռացանք. ես յոգնութիւն առնեմ. . . ո՛հ, ինչպէս կը խնդան, ինչպէս ուրախ են. դուք չէք զուարճանար երբ ամենը ուրախ են: — Եւ ինք նստաւ պարզ և անհոգ կերպով մը խոտին վրայ, արևելեան ձևով: Իսկ երիտասարդը ոտքի վրայ կեցած՝ ծանր և զրեթէ տխուր՝ պատասխանեց.

— Այո՛, շատ կ'ախորժիմ երբ ամենը ուրախ են, և իմ առաջին քնքս է ամենուրեք հետ ուրախ լինիլ, և ապացոյց՝ քիչ մը առաջ խաղալ՝ ինչպէս կ'անուանէք այդ խաղը. . . :

— Մածուն ծախեմ. . . :

Արդէն իրիկուն էր, մարը մոնողարեւը քանի մը նշուլ կը ձգէր մթադոյն տերեւներուն մէջ: Սաթինիկի մազերը կը փայլէին այդ նշուլներէն, անսովոր հետաքրքրութիւն մը կ'զգար, և աչքերը բացած՝ կը նայէր նորա երեսը, կ'սպասէր որ շարունակէ. . . :

Բայց անկարելի կը լինի:

— Կան ոմանք որ երեսխայութիւն չեն ունենար: Ոչ խաղալիկներու շատ փափաք, ոչ ուրիշ տղոց հետ խաղալու սէր, ոչ անհանդարտութիւն և ոչ իսկ հագուստներս փճացընել հոգերու մէջ կամ ուրիշ կերպով, ոչ մէկն ալ չեմ ունեցեր և չեմ ըրեր. . . : Բնական է թէ ո՞վ որ երեսխայ չլինիր, վերջն ալ երիտասարդ չէ կարող լինիլ, և միայն 30 տարեկան ծեր մը կը լինի. . . :

— Մեզ ըսին թէ դուք մաղձոտ էք և անոր համար կը ճանապարհորդէք:

— Մասամբ: Բայց բուն բժիշկները ինձ խորհուրդ տուին տաք երկիր մը երթալ ձմեռը, օրինակի համար Նեղիպոտոս, վասն զի կուրծքս տկար է: Ես յարմար առիթ սեպեցի և Պոլսէն անցնիլ, մանաւանդ որ ամառն ալ պէտք էր ծով մտնել. . . :

Ձայները կը մօտենային, ամենը միացան, և դացին այն կողմը ուր աւելի տարիքով անձինք նստած էին:

2.

Յուշիւր շատ շուտ անցաւ, ցորեկը թէև տաքը սաստիկ էր, բայց իրիկունը՝ ծովային հովը չորս կողմը կը զովացընէր: Գ. . . գիւղին բնակիչները կը պտտէին, ծանօթները կը պատահէին իրարու, և յետոյ կ'երթային միմեանց տուն տեսնուելու և խօսելու: Սաթինիկ շատ դու՛ էր իր աշխարհքէն. սիրով կ'ուզէր որ ամեն օր 18 աստիճան տաքութիւն լինէր, վերջը երբ օդը զովանար երթային պտտելու, և մանաւանդ շատ իրիկուն — երանի թէ ամեն իրիկուն այդ կարելի լինէր — Գեղարդեանց իրենց դար: Եւ ամօթ էր իր այդ զգացմունքը. նա չէր իր բոլոր տեսածներուն մէջ ամենէն զիտունը՝ ամենէն աղնիւր՝ իրեն համար ամենէն դեղեցիկը նաև, նորա հետ չէր որ իր սովորական անտարբերութիւնը մէկդի դնելով՝ ամեն նիւթի վրայ կը խօսէր աշխուժով, և նա իրեն չէր ըսեր թէ մեծ նմանութիւն մը կայ իրենց կարծիքներուն և զգացմունքներուն մէջ, և մինչև իրի-

կուն մը — իրիկուն մը որ երբէք, երբէք պիտի չմոռնար — վայր-
կեան մը, միայն ըստէ մը մինակ մնացեր էին և Սաթիւնիկ սրտի
տրոփմամբ հարցուցեր էր թէ պէտք էր որ անպատճառ Յգիւյ-
տոս երթար աշնան, այդ էր հարկաւոր իր առողջութեան, և
նա չիօթած՝ շուարեալ՝ զրեթէ ինքզինքը կորուսած պատաս-
խաներ էր թէ՝ աւելի կ'ուզէր այդ տեղ՝ իր մօտ մեռնիլ, քան
թէ ուրիշ տեղ մը ապրիլ . . . :

Սակայն ամեն բան մեր ուղածին պէս չշարունակեր. այդ
է մեր դժբաղդութիւնը. և շատ անգամ ալ մեր ուղածին հա-
կառակ կերպով կը շարունակէ :

Առաւօտ մը հայրը կանչեց զՍաթիւնիկ, և ըսաւ լուրջ կերպով.

— Նախ, աղջիկս, պէտք է աւելի զգուշութեամբ վարուիս,
և դուռ դրացիին իրաւունք չտաս քու վրադ խօսելու օտար ե-
րիտասարդի մը շատ բարեկամութիւն ցոյց տալով, թէ և այդ ե-
րիտասարդը մեծ կատարելութիւններ ունենայ: Քսան տարե-
կան աղջկան մը արդէն ներքի չէ տղայական ձևերով վարուիլ
և պարզ ու միամիտ խօսքեր ընել միշտ: Նրկորդ . . . և քիչ մը
մտածեց . . . զիտես դու որ մայրդ և ես ինչպէս կ'ուզենք քու
երջանկութիւնդ, և կարծենք որ երջանկութիւնը պատրաստ է
քեզ համար:

— Ինչպէս, հարցուց Սաթիւնիկ սաստիկ յուզեալ, ինչ եր-
ջանկութիւն, ինչ բան . . . :

— Եթէ երջանկութիւն է իր կեանքն անցընել պատուական
մարդու մը հետ որ բաւական ծանօթ անուն՝ աղէկ ղիրք՝ հի-
մամբ դատարարակութիւն ունի, դու երջանիկ կը լինիս, զաւակս:

— Ո՛հ, հայրիկ, չէ, երբէք այդ չեմ ուզեր:

— Բայց դեռ չես զիտեր ո՞վ է:

— Եւ չեմ ուզեր զիտնալ:

— Պէտք որ զիտնաս, դու կը ճանչես զինքն:

— Կը կրկնեմ ըսածս, հայրիկ, ներէ՛ եթէ կը նեղացընեմ
քեզ, բայց երբէք . . .

— «Երբէք» բառը բաց ի Աստուծոյ ոչ որ չկրնար ըսել:
Անցնի թող քիչ մը ատեն, մտածէ՛ . . . :

— Մտածելու պէտք չունիմ:

— Ա՛րեւայ թէ, ըսաւ հայրը դառնութեամբ, դու կարծես
թէ միայն բռնօքիսէօր մը կրնայ երջանկութիւն տալ, նոյն խի
եթէ նա հիւանդոտ լինի և . . . չվերջացուց ինչոր սկսեր էր ը-
սել, աւելի համոզիչ և քաղցր կերպ մը առնելով զրուցեց. — Ը-
սէ՛ ինձ, աղջիկս, ինչէ պատճառն այդ մերժելուդ, վստահու-
թիւն չունի՞ս իմ վրաս:

— Ինչե՛ր կ'ըսես, հայր իմ:

— Ուրեմն . . . :

— Շաբաթէ մը նորէն խօսինք այս նիւթին վրայ, բայց ինչ
որ ալ պատահի՛ կը մերժեմ այդ առաջարկութիւնը:

Ինչո՞ւ հայրը աղջկան չուզեց ըսել թէ ինք իմացեր էր որ
Գեղարդեանցի կեանքը աղատ չէր, և ինչո՞ւ աղջիկը անկեղծու-
թեամբ հօրը չյայտնեց իր զգացմունքը. աղջիկը կը քաշուէր և
կ'ամաչէր հօրմէն, իսկ հայրը աւելորդ կը սեպէր «անցած դա-
ցած» բանի մը վրայ մանրամասն խօսիլ:

Բայց Սաթիւնիկ կ'ուզէր անձամբ Գեղարդեանցի հետ տես-
նուիլ: Եթէ նա՛ իր սէրը պիտի յայտնէր, այդ սիրոյ խօսքը ա-
մենէն առաջ ինք պէտք է լսէր, և եթէ պիտի մերժէր նաև, որ
անկարելի էր, այս ապահով զիտէր ինք, այդ մերժումը միայն
ինք պիտի իմանար:

Սաթիւնիկ կ'ուզէր առանձին խօսիլ նորա հետ, բայց ինչպէս .
իրենց տունը, փառք Աստուծոյ, միշտ լեցուն էր, եկող գացող
անպակաս, եղբայրներու խումբ մը, որոնց երկուքը եթէ դուր-
սը լինէին, մէկ քանին տունն էին: Իսկ պատելու ժամանակ
ճամբուն մէջտեղ սկսիլ այսալիսի խօսակցութիւն մը՝ որ չէր զի-
տեր ինչպէս սկսի: Եւ իրաւ, ինչ պիտի ըսէր, շատ մը բաներ
կը պատրաստէր ըսելու համար և ոչ մէկուն վերջնական հաւա-
նութիւն չէր տար: Մտածեց խորհուրդ հարցընել մէկուն . . .
բայց չէ՛, պէտք էր իր գաղտնիքը պահել՝ մինչև որ իր բաղժն
որոշուէր:

Դիպուածը իրեն առիթ պիտի տար: Գտնուեցաւ առանձ-
նութեան ցորեկ մը, տունն անապատ մնացած՝ ինքը մինակ:

Գրան դանդաղ կը հնչեց, և սանդուխին գլխէն նայեցաւ, և այնչափ վարպետ եղաւ որ «ո՞վ կայ» հարցմունքին փոխարէն աւելի շուտ կրցաւ իմացընել թէ «ո՞վ կար» տան մէջ: Եւ բոլոր այս ջանքը՝ այս աշխատութիւնը իր ամեն յոյսերը՝ ամեն երազները կործանելու համար էին: Երբ մտան սրահը, յանդուգն աղջիկը բոլորովին զղջաց զայն առանձին ընդունելուն, և վայրկեան մը՝ մտածեց անտարբեր բաներու վրայ խօսիլ. ի՞նչ, ինք, ինք պիտի համարձակէ՞ր դառնալ երիտասարդի մ'ըսել թէ «հետս ամուսնացի՞ր»: Անգամ մը բերանը բացաւ, և բոլոր պատրաստած ճառերուն փոխարէն՝ իր լեզուն մեքենաբար այս խօսքն արտասանեց. «Շատ տաք է և փոշի:» Մէկ քանի այս տեսակ խօսքեր փոխադարձ ըսին: Յանկարծ ոտք ելաւ Սաթինիկ, ու շաղրութեամբ նայեցաւ երիտասարդին և ըսաւ.

— Մեր երկուքին մէջ կայ նիւթ մը, որու վրայ առաջ դուք պէտք էր խօսէիք, բայց պարագաները պարտաւորեցին որ առաջ ես խօսիմ: Կան չարալեզուներ որ ձեր այցելութիւններն կը համբէն և մեր նայուածները կը լրտեսեն, ի՞նչ է դարմանը — հեռանալ կամ . . . :

Նա ևս ոտք ելեր էր և տեսակ մը վախով կը նայէր աղջկան: Սաստիկ կը քրտնէր. օրիորդ Պերճեանի աչքերը՝ թէև ամպի մը մէջէն՝ լաւ տեսան նորա շփոթութիւնը:

— Ո՛հ, մի՛ վախէք այդպէս: Եթէ չեմ սխալիր՝ միայն Անդրիոյ Թագուհին կրնայ իր ձեռքը և իր անձն ուրիշի մը առաջարկել, իսկ ինձ համար, սովորական մահկանացուի մը համար այդ տեսակ առաջարկութիւն ընել՝ նուաստանալ է: Միայն, ուղեցի ձեզ իմացընել թէ շատ պատուական մարդ մը՝ ամուսնութեան համար ուզեր է զիս հօրմէս. բայց վասն զի դուք, և բռնի կերպով մը ժպտեցաւ նա, ցնորքի՝ կ'ուզէք խենթութիւն ըսեմ՝ վայրկենի մը մէջ ինձ ըսեր էիք թէ «աւելի կ'ուզէիք ինձ մօտ մեռնիլ քան թէ ինձմէ հեռու ապրիլ:» — Հիմա կը տեսնեմ թէ այս վերջինն աւելի դիւրին է ձեզ համար, — ես այդ մարդուն անունն ալ չհարցուցի . . . :

— Եւ անունը նաև չգիտէք . . . ուրեմն մերժեցիք:

— Եւ դուք դեռ չէ՞ք ուզեր հասկընալ, և քառորդ մը պարագայ տեղ ես կը խօսիմ . . . :

— Ըսած եմ արդէն ձեզի թէ իմ կեանքիս մէջ դժբաղդութիւններ կան, ահա և մէկը. ես խոստացած եմ աղջկան մը իրեն հետ ամուսնանալ, իմ համակրութիւնս ձեզ համար մեծ եղաւ, և ես յանցաւոր եղայ միայն այդ համակրութեան հետեւելով: Բայց պարտքս ուրիշ տեղ է . . . :

Վերջին բառերը արդէն չէր լսեր Սաթինիկ, իրեն այնպէս երեցաւ որ ամեն բան իրեն համար մթնցաւ այս աշխարհիս վերայ, բայց զուրկ չձուեց՝ արցունք մը չթափեց, և այն մարդուն՝ որուն ոտքերը ինք կրնար համբուրել առանց իր հպարտութիւնը խոնարհած համարելու, այն մարդուն ուզեց վերջին արհամարհանք մը միայն յայտնել՝ որպէս զի նա դառնութեան և խղճի խայթի յիշատակ մը պահէ իրմէ:

— Դուք, ձեր տիեզերական պատմութեան մէջ անշուշտ տեսած էք որ երկու տեսակ էակներ կան, խաբողներ և խաբուածներ. խաբողները՝ ինչ վիճակի՞ ի՞նչ փառքի մէջ ալ որ գտնուին, ինչչափ յառաջագէ՞մ՝ նշանաւոր նաև լինին իրենց ստացած կրթութեամբ և ուսմամբ, չեմ ուզեր վճռել թէ ի՞նչ տեսակ էակներ են . . . իսկ խաբուածները թէև ծաղրելի լինին, դրեթէ միշտ ազնիւ և ուղիղ են: Մնաք բարով. . . » և գլխով բաւեց հեգնական կերպով . . . :

Երբ գնաց իր սենեակը, նստաւ անկողնին վրայ, առաջին օրէն ի վեր, այն օրէն ուր զիս տեսած էր, բոլոր օրերը՝ կարգաւ՝ այդ երեք ամսուան ցնորքը — ինչո՞ւ բոլոր կեանքը այդ 90 օրերուն մէջ չէր անցեր, — յիշեց և ըսաւ բարձրաձայն. — Ի՞նչ խենթ էի, Տէ՛ր Աստուած: Նորէն իջաւ սրահը, ոտքերուն ծայրին վրայ կոխելով, կարծես թէ մէկը պիտի գտնէր հոն, կիսաբաց դռնէն նայեցաւ և մտաւ: — Գացեր է, ըսաւ բարձրաձայն. լուրթեան մէջ՝ պատէն կախուած ժամաժոյց մը միակերպ կը հնչէր, և ինք մեքենաբար նորա դարկը համբեց:

Է.

Եթէ Ասիոյ խորերուն մէջ ճնշեալ կիներ՝ երբէք յանդգնէր իր ամուսնոյն և տիրոջ, իր նշանածին կամ իր սիրականին (ենթադրելով թէ նա կարողանար սիրական ունենալ) կամ վերջապէս ո՛ր և է մարդու մը նախատինք մ'ընել, հաւանական է թէ այդ ամուսինը՝ կամ նշանածը՝ կամ սիրականը ոտքը դնէր նորա կուրծքին վրայ և աղէկ մը ծեծէր . . . բայց նոյնպէս Ասիացի մը՝ Հայ մը երբ Եւրոպական դաստիարակութիւն առած է, երբ իր միջին դարու պատմութենէն քիչ մը ասպետութիւն ժառանգած է, երբ Գերմանական (mystique) գրականութեամբ սնեալ է, ուր կինը՝ թէև միշտ քիչ շատ խոհարար՝ բայց դարձեալ իւր բանաստեղծական լուսապսակը կը պահէ, — այդ միւս անկիրթ Ասիացւոյն ըրածն ընելու միջոցներն ալ եթէ ունենայ՝ անշուշտ չընէր:

Նոյն իրիկունն արդէն Բերա իջած էր Գեղարդեանց. կը վախճէր ամենէն, իր ծանօթներէն, այն տեղերէն ուր երեք աւիս տարտամ երջանկութիւն մը վայելէր էր, եթէ կարենար՝ ինքզինքէն նաև պիտի վախճէր . . . Ինք, որ տղայ մը խաբել չէր կարող, խաբեբայ մը կարծուած էր: Իր յանցանքը իր տկարութիւնն էր: Աստուած՝ իր գլուխը և իր սիրտը միմեանց հակառակ կերպով ստեղծեր էր. գլուխը՝ այնպէս շինուած էր որ ամեն ուսմանց՝ ամեն մտաւոր աշխատութեանց ղիմանայ, որ ամեն բարձր գաղափար հասկընայ, որ ոչ մէկ յառաջադիմութիւն՝ մինչև իսկ ոչ մէկ չափազանցութիւն անկարելի չերևան իրեն, իսկ սիրտը որ ամեն հարեանցի զգացմամբ յուզուի, ամեն ցնորքներու ազդեցութիւնը կրէ, և ամենէն ոչինչ միշտը մեծ ցաւ համարի . . . : Գեռ պատանի՝ երբ կին մը կը տեսնէր, իր խեղճ սիրտը կը բաբախէր. քանի մը աղջիկներ անցած էին իր մօտէն, և նոցա իւրաքանչիւրը մտատիւար դարձեր էր իրեն համար, վերջը անհետացեր էր ստուերի մը սկիւղ, և ուրիշներ

յաջորդէր էին նոյնպէս անհետանալու հար: Բարեբաղդարար միշտ մտատիւար էին և երևակայական մնալով՝ իր դասերն և ուսմունքը չէին խանդարեր և ինք կը մնար անարատ: Թերևս նկատած են ոմանք՝ թէ կան բանաստեղծներ որ ամեն կանանց՝ կամ լաւ ևս՝ կնոջ սիրահարն են: Գեղարդեանց բանաստեղծ չէր, բայց այդպէս էր:

Ուսմունքը վերջացրէնէն և վարժապետութեան աստիճանն ստանալէն վերջ, քանի մը տարի շարունակէր էր այդ պաշտօնն ի Մոսկուա, և յետոյ գնացեր էր Թիֆլիս ուր կը գտնուէր իր ընտանեաց մէկ մասն:

Ամեն տեղ սովորութիւն է աղջիկներն ամուսնացընել, ջանալ զանոնք երջանիկ ընել, բարոյական և նիւթական արժանաւորութեամբ անձինք ճարել նոցա համար. բայց այդ երեւոյթը կարելի է ոչ մէկ տեղ այնչափ զարգացած՝ այնչափ իր վերջին կատարելութեան հասած չէ, ինչչափ Թիֆլիս: Գեղարդեանց երբ գնաց հոն, բոլորովին չիոթած էր, ամեն կողմէն ուղղակի և անուղղակի առաջարկութիւնք կը թափէին. ինչ ընէր, չէր զիտեր. կ'ըսէր թէ ամուսնանալու միտք չունի. և զինք չըջապատողները աղուաներու կը նմանցընէր: Նոր անցաւ տարիի մը չափ ժամանակ, այդ առաջարկութեանց հեղեղը դադրեցաւ, ամենը վարժեցան զինք միշտ տեսնելու, զանազան ընտանիքներու հետ ծանօթացաւ: Իրաւ, կը պատահէր երբեմն երբեմն ու և է կովկասային թուխ գեղեցկութիւն մը, հպարտ և մութ աչքերով, որ իրեն դողեր կը պատճառէր, բայց երկար չէր տևեր, և դարձեալ սովորական միժակը կը գտնէր: Վերջապէս, կարծեց թէ խորխոր գտաւ, թէ ամեն ալեկոծութիւն պիտի վերջանար. այս անգամ սիրտը բան մը չէր զգար. ոչ ժպիտն էր զինք գրաւողը, ոչ աչքը, ոչ հասակը. միակ բանն էր որ չկորսուիր մինչև մահուան վայրկեանը՝ հաստատուն բնաւորութիւն մը, սուր միտք մը լաւ կրթութեամբ օժտեալ: Օրիորդ Պրասկեանց տարեկից էր իրեն. նա արդէն անցուցեր էր ցնորքներու տարիքը, և ինչպէս յայտնի կ'ըսէր Գեղարդեանցի, պիտի ամուսնանար իրեն հետ իր անուան համար՝

իր ապագային համար . . . նա հաւատացած էր թէ այս աշխարհ-
քիւս մէջ ընկերութեանց ամենէն ապահովը՝ երկու հոգւոյ ըն-
կերութիւնն է որ զիրար կը հասկընան ամեն կերպով. և թէ ի-
րենք՝ երկու հոգի՝ եթէ միացընէին իրենց դրամը՝ հարստու-
տութիւն մը կը դառնար, միացընէին իրենց խելքը և գիտու-
թիւնը՝ տաղանդ մը կը գոյանար, միացընէին իր ընտանիքին
բաւական նշանաւոր անունը և երիտասարդին ուսումնական ա-
նունը՝ համբաւ մը կը դառնար . . . :

Բայց օտար մարդիկ, որ այս ընկերութեան՝ այս երկրորդու-
թեան մէջ խառնուելու ամենեւին իրաւունք չունէին, յանկարծ
մէջտեղ ելան և այդ ընկերութիւնն արգիլեցին. բոխիկները՝ ը-
սին թէ երբ երիտասարդ մը կը գունատուի՝ ձայնը կը հոգնի՝
վերջը կուրծքը կը ցաւի և թաշկինակին վրայ արեան բիծեր
կ'սկսի տեսնել, պէտք է տարիքն առնէ և յետոյ ամուսնանայ,
և թէ փոխանակ աշխատելու՝ պէտք է իր առողջութեան վրայ
հոգ տանի: Մանաւանդ, ճամբորդութիւն ընել՝ ձմեռ մը տաք
երկիր երթալ խորհուրդ տուին: Ճամբորդութեան սնտուկներ
մէջտեղ ելան այն ատեն, մնաք բարեւներ գրուցուեցան, կրկին
տեսութեան խոստումներ եղան և Գեղարդեանց ճամբայ ե-
լաւ դէպ ի Պօլիս, ուր իրեն ծանօթացանք:

Գիշեր էր, Գեղարդեանց կը պտտէր պանդոկի մը նեղ սե-
նեակին, իր մտածմունքէն ազատիլ՝ հանգստանալ կ'ուզէր և
չէր կրնար: Քնե՛լ, կարելի չէր. կարդա՛լ, իր աչքին դիմաց ար-
դելք մը կար, տոգոյն կերպարանք մը՝ չրթունք որ կը ճերմկէին
և հեգնական կերպով կը ժպտէին: Եւ այդ յիշելով՝ իր թուի
կերպարանքը կանաչ գոյն մը կ'առնուր, սև և մութ աչքերը
յուսահատութեամբ կը նայէին ամեն կողմ, կարծես թէ կ'ու-
զէին ըսել. Ի՞նչ կարելի է ընել: Արքալէր իր երկայն բարակ
խցիկին մէջ, և յետոյ այդ շարժմունքէն նաև յոգնելով աթոռի
մը վրայ կ'իյնար:

Երբեմն Սթիֆինի իրեն կ'երևար ինչպէս համարձակ աղջիկ մը,
առանց կանացի պարկեշտութեան, որ օտարականի մը դիտուն
կը նետուէր վասն զի էրիկ կը փնտռէր, վերջը, յիշելով բաց ի

այն վերջին օրէն միւս ամեն օրերը որ իրեն հետ տեսնուէր էր,
կարգաւ կը մտածէր այն խօսքերուն վրայ որ նա ըսեր էր իրեն
կատարեալ վստահութեամբ և պարզութեամբ, բայց մինչև իր
ձևերուն և բառերուն ընտրութեան մէջ մեծ պարկեշտութիւն
գնեւոր:

— Արջացընենք . . . ըսաւ, մօտեցաւ ճրագին, ֆրանսերէն
լրագիր մը առաւ և Լըյոտի ընկերութեան տեղեկագիր մը սկսաւ
կարդալ: Երկրորդ օրը շոգենաւ մը ճամբայ պիտի ելնէր դէպ ի
յՆիդրպտոս . . . վաղը՝ կանուխ կ'երթամ Ընկերութեան գրասե-
նեակը, եթէ տոմսակ դռնեմ (առաջին կամ երկրորդ բօստ մի
և նոյնն է) կը մեկնիմ, եթէ չեմ գտնէր, քանի մը օր կ'ըսպա-
սեմ . . . և գաղտնի յոյս մը ունէր՝ թէ այնչափ Անդլիայիք և
Ամերիկացիք Երուսաղէմ, Պէրութ և Ալեքսանդրիա կ'երթան
աշնան՝ որ խեղճ Հայու մը համար տոմսակ չեն թողուր, բայց
իր այդ հաշիւը սխալ էր, և երկրորդ իրիկունը շոգենաւին վրայ
կեցած էր, նայելով անհամար կայմերու նաւերուն՝ որ ծովածո-
ցին մէջ երկաթ նետած էին և մզլիթներու մինարէներուն որ
կամաց կամաց կ'անհետանային. տեսնելով այդ մզլիթները՝ յի-
շեց թէ Այա Սոֆիան և ուրիշ հնութիւններն չէր այցելեր.
Ինչ ըրի, ըսաւ ինքնիրեն, երեք ամիս, ոչինչ — ծովուն ալիք-
ներուն նայեցայ, և ինք՝ իր անձին համար խորին զթուիւն մը
դգաց. բայց յիշեց միանգամայն քանի մը երանութեան ժամեր՝
որոնք հաւանական է թէ պիտի չկրկնուէին իրեն համար, և իւր
անհուն ճանճրութեան մէջն՝ ժպտեցաւ վայրկեան մը մտածե-
լով թէ երբեմն թարմ և երիտասարդ կերպարանքներ նոյնչափ
արժէք ունէին իր աչքին ինչչափ խիստ և տխուր հնութիւնը:

Բ.

«Այնպէս փոխուած էր, այնպէս նիւար, այն-
 » պէս տխուր: Ի՞նչ ցաւայի է որ կեանքի մը
 » բոլոր փայլը՝ բոլոր երջանկութիւնը՝ շատ
 » անգամ ուրիշի մը կամքէ կախում ունենայ:»

ՕՐ. ԹԵՔՐԷՅ

Նրբ կը հարցընէին տիկին Պէշը Սթօլի թէ ի՞նչպէս գրած էր
 «Հօրեղբայր Թոմասի տնակ»ը, կը սլառաւորանէր. «Իմ կերա-
 կուրս եփելով»: Եւ բնական է, երբ ձեռքը աշխատի՝ միտքն
 ալ կը պտտի, կը հեռանայ և իւր դրաղմունքն կ'ունենայ, և
 մտածմունքի այս կերպ դրաղումն կանանց աւելի սովորական է:
 Միայն թէ ամեն կանայք իրենց կերակուրը պատրաստելու կամ
 ձեռագործը բանելու ժամանակ՝ գերբնեւրու աղաւթութեան կամ
 ո՞ր է ընկերական բարձր խնդրոց վրայ չեն մտածեր. մեծ մասին՝
 մանաւանդ մեր դեռ կիսովին դաստիարակուած չըմաններուն
 մէջ՝ հորիզոնը այնչափ նեղ է՝ որ մտածութիւնները շատ ան-
 դամ դրացիներու տուներէն հեռու չեն երթար, թէև անոր
 փոխարէն երեակայութիւնը այնչափ զօրաւոր են որ չեղածները
 նաև կը հնարեն: Նթէ մարդիկ ուզէին մի ընկերութիւն հիմնել
 աւելի բազմաթիւ քան թէ ամեն կրօնական միաբանութիւն,
 հօր՝ քաղաքական դաշնակցութեան մը պէս, պէտք էր կազմէին
 «բամբաստողաց ընկերութիւն մը»: Եւ այդ ընկերութիւնը ի՞նչ-
 չափ անդամներ՝ ինչչափ ճիւղեր կ'ունենար: Միայն կարելի է
 Ափրիկէի կամ Ովկիանիոյ մէկ քանի բարբարոս ցեղեր չմասնա-
 կցէին, որոնք փոխանակ զնոսանցի խալթուած տալու, դանա-
 կի և նետի հարուածներ կրնան տալ: Այդ ընկերութիւնը ան-
 ուղղակի կերպով միշտ և ամեն տեղ կայ, միայն դժբաղդաբար
 մարմին՝ կազմութիւն չունի: Նրբեմն ամենէն պարզերը իրեն
 զոհերն են: Նրբեմն պզտի մեղաւորները մեծ մեղաւորներուն

յանցանքը կը քաւեն: Նրբեմն ոմանք իրենց մեծ յանցանքները
 ծածկելու համար ուրիշներու թեթեւ յանցանքը կը հօջակեն, և
 եթէ յանցանք չկայ նաև, իրենք կը շարադրեն, և այս կը պա-
 տահի ոչ թէ օտարներու՝ այլ նոյն խի ամենամօտ յարաբերու-
 թեանց, ազգականութեանց, խնամութեանց մէջ: Իսկ հետեւան-
 քը այն է որ սիրելու պատրաստ անձինք տակելութեամբ կը լցուն,
 և նոքա որ բարի էին, այնչափ կը դառնանան որ իրենց բարու-
 թիւնը կը կորցընեն:

Սթօլինիկ այսպէս մերձաւոր բամբաստողներ չունէր, բայց
 ծանօթներու չըմանը (պարագլուխ ունենալով օրիորդ Թադոս-
 եան) սկսեր էր նկատել, թէ աչքերը աւելի խոր կ'ընկնէին և ե-
 րեսին գոյնը տոգոյն էր քանի մը շարաթէ ի վեր, ճիշտ ամէ մը
 ի վեր որ Գարեգին Գեղարդեանց գնացեր էր, և Սթօլինիկ ա-
 ռաջուան պէս շատ պտտէր, հիւրեր երբեմն կը տեսնէին թէ
 աչքերը կարմիր էին, և դարձեալ օրիորդ Թադոսեան գիտեր
 էր որ երբ տիկին Պերճեանի հետ Սթօլինիկի խօսքը բացուէր,
 տիկինը տոգոհ կերպ մը կ'առնէր և կարծես թէ ակամայ անու-
 նը կու տար, մինչդեռ առաջ՝ եթէ առիթ ունենար՝ սիրով բո-
 լոր օրը Սթօլինիկի կատարելութեանց վրայ կրնար խօսիլ: Բայց
 օրիորդ Թադոսեան այդ լուրսէնէն չէր կրնար ճիշտ բան մը
 դուշակել, և Սթօլինիկի մայրը իր խայծերը չէր կըներ:

Տերեւները կը թափէին, անոնք որ Բերա կամ ուրիշ տեղ կը
 բնակէին կը թողէին Գ... գիւղը, հարաւային քամին շատ ան-
 դամ ուժով կը փչէր բարձրացնելով միանգամայն ծովու ալիք-
 ները և ամառուան մնացորդ փոշին...: Իսկ Սթօլինիկ, ինչպէս
 ամեն տարի՝ այս տարի ալ կը մնար նոյն գիւղին մէջ, նոյն տան
 մէջ: Զարմանալի բան. մինչև հիմա այդ տունը սիրեր էր, պար-
 զօրէն սիրեր էր նաև ամեն սենեակներու պտտի թղթերը, մա-
 նաւանդ պարտէզը ուր տասն տարիէ ի վեր կը խաղար նախ՝ և
 վերջը արդէն մեծցած կը պտտէր լուսնի զիւերները մտածելով
 և երազելով: Տեսեր էր ուրիշ աշուներ, ուր դարձեալ տերեւ-
 ներն կը թափէին, և լներ էր ամառուան խաղաղութենէն վեր-
 ջը ծովուն փոթի ուրիշի մօտէ խնը, բայց նոյն տունը՝ նոյն պար-

տէղը՝ նոյն կահկարասիքը իր աչքին նոյնպէս հաճելի չէին երևեր .
ծովը միակերպ և ձանձրալի էր իրեն համար հիմա՝ թէ հանդար-
տութեան և թէ մթնոլորտի փամառակ : Երբ կը հաղուէր՝ խնամք չէր
տաներ իր անձին, կ'ըսէր . . . « Ինչ օգուտ, ո՞ւր համար . . . »
Գիտէր նաև առ հասարակ իր վրայ խօսուածները, թէ Գեղարդ-
եանց իրեն չէր հաւանած, իր ուսմունքը շատ հաբեանցի և բնաւո-
ր թիւնը թեթև էր գտեր, և թէ դէմքով կարելի չէր գեղեցիկ
ըսել իրեն, և գեռ հաղար ուրիշ խօսքեր, և իր վիրաւոր սիրոյն
վրայ կը ծանրանար և վիրաւոր անձնասիրութիւնը, բայց ամե-
նէն աւելի աղղեցութիւն կ'ընէին իրեն՝ հօրը լուսթիւնը և մօ-
րը հառաչանքները որ այնպէս կերպ մը կ'ընէր որ իրբն թէ մեծ
դժբաղդութիւն մը պատահած լինէր տան մէջ . Գեղարդեանցի
հետ տեսութեան վերջ հօրը հետ կարճ խօսակցութեամբ մը
նորէն իր մերժումը յայտնէր էր : Գորը սկիզբները ուղեց իրմէ
տեղեկութիւն առնել Գեղարդեանցի յանկարծ երթալուն վրայ,
բայց նա պատասխան նաև չառաւ և ըսաւ . « Կ'երևի թէ կ'ու-
ղէր որ քու իրեն տուած մէկ երկու ճաշերուդ փոխարէն՝ մնաս
բարով ըսելու գար և իր յաւիտենական երախտադիտութիւնն
յայտնէր . . . » Իսկ եղբայրներուն հետ ամենևին ընտանու-
թիւն չունէր, կը սիրէր գիրենք, բայց իր բոլոր նոցա հետ ու-
նեցած վերաբերութիւնն այն էր որ ճերմկեղէնին կը կարէր,
իրենց անկողնին ասղնեգործ ծածկոցներ կը բանէր և միշտ կը
ջանար օգտակար լինել իրենց, բայց եթէ յանկարծ իրենցմէ
մէկը մտերմանար շատ և անարկութիւն մը նաև համարձակէր
ընել, ինք կրնար աղէկ մը բերնին չափը տալ :

Օր մը Մաքսուհի մտնելով իր քրոջ սենեակը՝ տեսաւ որ նստած
էր ամբողջ մը վրայ՝ իր անկողնին քով, ուր բացած մեծ ախար-
հացոյց մը՝ ուղղորդութեամբ կը նայէր, մատերը կարգաւ դնաւ
դան կէտերու վրայ գնելով,

— Այդ ինչ է, ինչ կ'ընես :

— Ախարհագրութիւն կը սովորիմ :

— Այս ինչ գիրք է, և բռնեց Մաթինիկի ձեռքը, որ կ'ու-
ղէր հատոր մը բարձին տակ ծածկել. կարդաց Voyage an Egypte,

թողուց գիրքը, նստաւ, և ըսաւ . Այդ աստիճանի հասեր ես,
ինչ կը նայէիր ախարհագրութիւն վրայ, ըսէ ինձ, պէտք է որ վեր-
ջապէս ըսես, կը նայէիր թէ ինչ ճամբով դնաց Եգիպտոս . . . :

— Ոչ որ ինձ բան կը հարցընէ, ոչ մէկուն հոգն է թէ ես ինչ
փիճակի մէջ եմ, դուն ալ նոյնն ըրէ . . . :

— Չէ, ես նոյնը չեմ ըներ, եկուր մօտիկ, շատ մօտիկ, ս'յս-
պէս (և գրեթէ գիրկը կ'առնէր) ըսէ ամեն բան, փոխանակ ու-
րիշներէ սուտեր լսելու՝ քու բերնէդ իրաւն իմանամ . կը սիրէ-
իր գիրքը, և ինձի չըսիր, իսկ նա քեզ չտրեց . . . ոչ, ուրիշ
պատճառ մը կայ, այո՛, պէտք է լինի, այդպէս մի բռներ ինք-
զինքդ — լաց, վնաս չունի, և կ'երէր՝ վաղելով կ'երթար դուռն
կղպելու, յետոյ նորէն կու գար և գիրքը կը դգուէր փոքրիկ
աղջկան մը պէս . . . : Եւ կամաց կամաց ամեն խօսք կ'առնէր՝
կը կորզէր իրմէ, նախ՝ իրենց փոխադարձ բարեկամութիւնը՝
մէկ քանի համակրութեան խօսքեր, որ Մաթինիկ խոստմունքներ
կարծէր էր, և վերջապէս Գեղարդեանցի այցելութիւնը . . . :
Մաթինիկ բառ առ բառ կը կրկնէր իր ըսածները, բայց ոչ այն
օրուան հպարտ և արհամարհոտ ձայնով, այլ խօսքերը միմուն-
ջի մը պէս կ'երէին բերնէն, վերջը՝ երբ կը լմնցընէր պատմու-
թիւնը, երկուքն ալ կը մնային վայրկեան մը, մէկը իր յուսա-
հատութեամբ լցուած՝ և ամեն բան անբուժելի կարծելով, միւ-
սը՝ ճար մը մտածելով . . . ըսել իրեն թէ խենթութիւն ըրեր
էր, աղու մը պէս վարուէր էր . . . ինչ օգուտ :

— Միտքդ է, Մաթինիկ, որ քանի մը անգամ ինձ ըսեր ես
թէ քունը ախարհքիս ամենէն աղէկ բաներուն մէկն է . նոյն-
պէս աղէկ բան մը կայ, մոռնալ՝ մտքով քնանալ :

— Երբէք . չմոռնալ, յիշել, մէկ պատկեր ունենալ աչքի ա-
ռաջ, քուն կամ արթուն, և մեռնիլ՝ դարձեալ այդ պատկերին
հետ :

— Ուրիշ պատկեր մը դտնել, այդ պատկերը իրողութեան
դարձընել, հետը ամուսնանալ, զաւակներ ունենալ և մխիթա-
լուիլ :

— Միտքդ արուիլ . . . :

— Կու գայ օր մը, զաւակները մտածելու նաև ժամանակ
չեն թողուր:

— Շատ ջորհակալ եմ, իսկ եթէ զաւակ չունենամ . . . :

— Այդ՝ հազարին մէկ կրնայ պատահիլ:

— Դեռ չեմ համոզուած ըսածներուդ, միայն հետաքրքրու-
թեան համար հարցընեմ . . . ու՞մ հետ ամուսնանամ:

— Կանեփեանի հետ:

— Գրեթէ չեմ տեսած:

— Ես քու գրեթէներդ գիտեմ, տեսած ես. գիշեր մը՝ թատ-
րոնը, երբ ինք գիտակով քեզի կը նայէր, և կարծես թէ շատ
ախորժելով . . . վերջը գիտակը վար կ'առնէր և նորէն մինակ
իր աչքերով կը նայէր:

— Կ'երևի թէ իր մտատխարքը միայն մոմիաներ չեն, ըստ-
աղջիկը տխուրութեամբ ժպտելով . . . այդ մարդը ի՞նչ կ'ընէ:

— Պանքի գործողութեանց մէջ է. գիտես որ Պօլսոյ հրա-
պարակին վրայ գտնուող մարդկանց ամենէն խելացիներէն մէկն
է. իսկ ընկերութեան մէջ՝ նա այնչափ սրամիտ է և միանգա-
մայն ծանրագլուխ որ պէտք է խօսքը չափելով և զգուշութեամբ
ըսել. ամեն նիւթի վրայ տեղեկութիւն ունի, և միայն այն կողմ
գիտակ կ'ուղղէ ուր կ'արժէ . . . և գիտով բարեւեց ծիծաղելով:

— Կ'երեւակայեմ, գրական մարդ: Բայց ահա՛ այդ է որ զիս
կը վախցընէ, ամեն կատարելութիւն ունեցողն մեծ պահանջող
մ'է, իր կատարելութեանց փոխարէն ուրիշներու կատարելու-
թիւնն ևս կը պահանջէ: Ես առաջ, դեռ շատ առաջ, մտածե-
լով ամուսնանալու վրայ, կ'ըսէի ինքնիրենս, ի՞նչ վտանգաւոր
բան է շատ խելացի մարդ մը . . . :

— Այնչափ վտանգաւոր ինչչափ այն մարդը որ իր ըրած
խոստմունքները շատ ուշ կը յիշէ և գլուխը ամպերուն մէջ կ'ապ-
րի . . . :

Թ.

«Թեւերը ծայրեց, նամակին քնքրեցմունքը չկրցաւ,
» շարունակել, և արցունքի մեծ կարիւներ իր
» աչքերը քրջեցին: — Մեռե՞ր և նա, հարցուց
» Նանօն: — Երէ այդպէս լինի՞ր՝ չէր գրէր . . . »

ՊԱԼՁԱՔ

Օր մը աղախինը նամակ մը տալով Սաթինիկի, զրուցեց թէ
անձանթ մարդ մը բերեր և թողեր էր, առանց ըսելու թէ ուն-
կից է. պահարանի վրայ ոչ մէկ քաղաքի բօսթի կնիքը չկար և
աղջիկը կարծեց բնականաբար թէ զիւղին մէջէն բարեկամուհի
մը գրած էր: Բացաւ, և զարմանալով կարդաց այս տողերը.

«Նքր երկու հոգի զիրար կը վիրաւորեն, իրարմէ ներումն
չեն խնդրեր, երկուքն ալ միմեանց միտած են. և ես, եթէ
այս նամակը կը գրեմ ձեզ, Օ'ըրօրդ, ներումն խնդրելու համար
չէ, այլ միայն յայտնելու համար թէ ես մի խորեայ չեմ, թէ
իմ զգացմունքս, որ սովորաբար վատ խորհրդական եղած են
ինձ համար, զիս սխալեցուցին:

«Թուղթս ոչ թուական ունի, ինչպէս կը տեսնէք, և ոչ քա-
ղաքի անուն կը կրէ, վասն զի դուք պէտք չէ գիտնաք թէ ես
ո՞ւր եմ և ի՞նչ կ'ընեմ, և ես նոյնպէս պիտի չիմանամ թէ ի՞նչ
եղաւ ձեր կեանքը և վիճակը՝ որ յուսամ երջանիկ լինին ձեր
կատարելութեանց ջորհիլ:

«Նթէ յանդգնէի խորհուրդ մը տալ ձեզ, պիտի խնդրէի որ
նամակս այրէք որպէս զի անցեալէն հետք մը չմնայ:

«Մնաք բարով, ձեր յիշատակը յարգելի պիտի լինի ինձ հա-
մար:

«ԳԱՐԵԳԻՆ ԳԵՂԱՐԴԵԱՆՑ»

Բայց Սաթինիկ նամակը չայրեց . . . : Մէկ քանի օր հաղուս-

տին մէջ՝ սրտին շատ մօտ պահեց զայն, բայց վերջապէս մտա-
ծեց թէ աւելորդ է միշտ իր վրայ պահել այնպիսի գրութիւն մը
որ դպրոցը սորված դասերնէս աւելի լաւ՝ բերնուց դիտենք, և
գիրքի մը մէջ զրաւ ու բոլոր ունեցած տետրակներուն և թուշ-
թերուն տակ պահեց այնպէս տեղ մը, ուր ոչ մէկը չէր կրնար
փնտռել և գտնել: Իր վերջին յոյսը կը կտրուէր, իր առաջին
համակրութիւնը կը մնար կիսկատար երազ մը՝ որուն շարունա-
կութիւնը երբէք պիտի չտեսնէր . . . :

Պոնէ ամեն օտար աչքէ կարենար հեռու լինիլ, գոնէ ազգա-
կան և ծանօթ իր տխրութիւնը փարատելու համար խորհուրդ-
ներ չտային, չլսէին թէ երթայ Բերա իր մէկ հօրաքրոջ տունը՝
զուարճանալու. չէ՛, կ'ուզէր ինք այդ ձմեռը անցընել առանց
զուարճութեան՝ առանց սփոփանաց, մինակ նստիլ իր սպառու-
հանին քով, նայիլ ձիւնին որ կ'իյնար կը թափէր, կակուղ և
ձերմակ, և անդին՝ ծովուն՝ որ աւելի սև կ'երևէր. երբեմն ձա՛մ
բորդութեան մեծ նաւեր կը թողուն նեղուցը, աներևոյթ կը
լինէին երթալով դէպ ի Մարմարա, և կ'ըսէր ինքնիւրեն թէ մի-
այն երջանիկներն անոնք են որ ազատ են երթալու ո՛ր որ ու-
ղեն, հեռու՝ շատ հեռու. մինչև իսկ կը մտածէր երբեմն թէ ա-
մենէն երջանիկ նոքա չեն որ ամեն տեղէ հեռու, կ'երթան այն
անհունին մէջ «ուսկից ետ չեն դառնար» . . . :

Երբեմն մեծ ծուլութիւններ նաև ունէր, բան մը չէր ուզեր
ընել. բայց իր մայրը այդ չէր հասկընար. նա՛ որ ամենուն հա-
մար բարի էր, ծոյլերու համար չարասիրտ էր. և թէ գտնուէր
հնարք մը որ մարդուս աչերը մէկ գործի՝ ձեռքը ուրիշ գործի
և ոտքը մի ուրիշ գործի կարենային աշխատիլ, ինք շատ ուրախ
կը լինէր: Զինքն առաջին անգամ տեսնողը մէկէն կ'ըսէր. «Ի՛նչ
նիհար է խեղճ կինը». բայց նա առողջ էր. միայն ինչպէս գիր-
նար այդ մշտնջենաւոր շարժմունքին մէջ: Շարունակ հարցմունք-
ներ կային. Սթիվինսի, չափիկները լմնցան, Սթիվինսի, այն խծի-
պը ըրի՞ր . . . :

Մինչև անգամ այդ Մանաւազեանը գինք կը նեղացընէր. և ր-
բեմն հատորներով գիրքեր կը բերէր և կ'ըսէր թէ Ն . . . ին կամ

Բ . . . ին են, այնպէս որ պէտք էր շատ շուտ տիրոջը դարձնել,
բայց պատուական գրութիւնը են և պէտք էր օրիորդ Սթիվինսի
կարգար անպատճառ, երբեմն իր բանաստեղծութիւնքն կը բե-
րէր և ինք անձամբ կը կարգար իր կերկեր ձայնով տասն տողին
մէկ ըսելով՝ «ուշադրութիւն ըրէք այս կտորին»:

Օր մը նաև Սթիվինսիին խորհուրդ տուաւ ազգային գործող
մը դառնալ, այս ինչ ընկերութեան մասնաժողովի անդամ լի-
նելու ջանալ, այս ինչ դպրոցի մէջ դասեր տալ ձրի. և ըսաւ թէ
«մեծ սիրտ ունեցողներն հասարակաց բարւոյն մէջ իրենց միտ-
թարութիւնը պէտք է գտնեն, և թէ մանաւանդ մեր ինկած
ազգին մէջ — և այլն, և այլն» և գեղեցիկ ձառ. մը որ Սթիվինսի
մտիկ կ'ընէր խնդալով:

— Ենթադրենք թէ ես միտթարուելու պէտք ունենամ, և
մէկ Բէ՞ ահագին ալ սիրտ, ինչպէս պատիւ կ'ընէք շնորհելու,
բայց կ'աղաչեմ, գրուցէք թէ ո՛ր, ո՞ր վէպին մէջ գտեր էք այդ
ձեր ազգասիրական պարբերութիւնները, այդ սերտուած խօս-
քերը, և չէ՛ք ձանձրանար դուք և ձեզ նման երիտասարդք,
կրկնելով՝ յաւիտեան կրկնելով մի և նոյն բանը. ձեր ձեռքը
չըյողնիր գրելու ժամանակ և շունչը՝ խօսելու այն որ մէկ հա-
մառօտութիւնն է արդէն շատ ատենէ ի վեր գրուածներու . . . :

Եւ երբ Մանաւազեան բարկացած՝ ընդմիջել կ'ուզէր . . . «Պուք
ամենքդ կ'ըզգա՞ք հայրենասիրութիւն, չէ՛, ես չեմ ուզեր զիս
խաբել, ձեզմէ շատերը անկեղծ չեն. հայրենասիրութեան, ազ-
գասիրութեան բառերը հիմա պատուանդան մը դարձեր են ժո-
ղովրդականութիւն ունենալու համար . . . :» Այն ատեն Մաք-
րուհի որ սովորաբար ներկայ էր, մէջ կը մտնէր, կը գրուցէր թէ
իր քոյրը պղտիկ անիրաւ մ'է որ ըրածը թողածը գեռ բոլորովին
չգիտէր և թէ մէկ երկու տարի անցնի՝ բոլոր իր սուրբ զայրոյ-
թը պիտի անհետանայ. իսկ Մանաւազեան կ'ըսէր.

— Բանի որ գործողները ձեր կարծիքով իրենց անձնասիրա-
կան նպատակներուն համար կը գործեն և կը գրեն, ուրեմն
դուք գործեցէք, Օրիորդ, աւելի մեծ իրաւունք գործելու հա-
մար, ո՞վ որ ուրիշներուն չհաւնիր, պէտք է անոնց ըրածէն աւ-
ելի լաւն ընէ . . . :

— Ահա չգործելուս պատճառը. իմ անկարողութիւնս. կամ պէտք է զօրութիւն մը չիենել տաղանդով կամ գրամով, կամ տունը նստիլ և իր գուլպան հիւսել:

Ժ.

Մանաւագետների բերած գիրքերը կարդալ, նորա հետ վիճիլ, ծիւնին և ծովին նայիլ շատ լաւ բան էր, բայց կամաց կամաց ձանձրալի կը դառնար: Սաթիւնի վերջապէս լսեց Մաքրուհիի սախալող խօսքերուն, որ խնդալով կը խոստանար իրեն թէ անշուշտ պիտի պատահէր «վտանգաւոր» մարդու մը որուն կարելի է բարեկամանար, և իր քեռորդուն հետ որ 4 տարեկան էր, գնաց բերաւ: Մաքրուհիի մարդարեութիւնը կը կատարուէր. Սաթիւնի կը բարեկամանար վտանգաւոր մարդուն հետ՝ որուն շատ տեղ կը պատահէր. նախ՝ պարահանդիսի մը մէջ՝ անթիւ ճրագներու լուսով, յետոյ՝ հասարակաց պարտէզ մը՝ ցուրտ բայց առողջ օդով՝ արեւու լուսով, և կ'ըսկէր քիչ քիչ համողութիւն թէ հաճելի լինելու համար պէտք էր անպատճառ մութ սեւ աչքեր ունենալ և պատմութեան դասեր տալ. կը յիշէր իր մէկ երկու կարդացածները՝ ուր կինը եթէ յանկարծ տեսնէր թէ իր մեծ մարդ կարծածը սովորական մի էակ է, և թէ իր վառաց երազը չկատարուիլ՝ իր խաբուած յոյսերուն հետ սէրը կը կորցընէ: Երբ առաջին անգամ աղէկ մը տեսաւ Կանեփեանը, մէկէն այս մտածութիւնն ունեցաւ. Ահա՛ մարդ մը որ լաւ կը մտածէ, լաւ կը գործէ, լաւ կը քնէ և լաւ կ'ուտէ: Եւ իրաւ, իր կերպարանքն երկու բան կը յայտնէր, առողջութիւն և իր անձին վրայ վստահութիւն առանց հպարտութեան կամ թեթեւութեան: Միայն՝ կը մտածէր Սաթիւնի. «Պիտի սիրէ՞ զիս. այդ հաշուողը, այդ մտածողը՝ այդ չափաբերական մարդը սիրտ մը ունի՞ արդեօք. չէ՞, պիտի չսիրէ, և թէ ես խելացի կերպով վարուիմ՝ համարձեռնք պիտի ունենայ վրաս:» — Երբեմն, յանկարծ տփուկ իր լուին հաւանութեան դէմ, նորէն կ'ապրէր իր անցեալին հետ,

աչքերը կը ծածկէր վայրկեան մը ամառուան տեսարանները կրկին տեսնելու համար:

Բայց իր քեռորդին իրեն ժամանակ չէր տար այդպիսի երկար բարակ մտացմանց համար. հագուստները կը պատուտէր՝ և պէտք էր կարել, պատշգամբի երկաթներուն վրայ կ'ենէր, և պէտք էր նայիլ որ չիցնայ. վերջապէս մշտնջենաւոր շարժումը մը կար տան մէջ որ տասներկու ժամէն աւելի կը տեւէր և որու վրայ պէտք էր աչքերը լաւ բանալ ու հսկել: Երբեմն նաև պէտք էր տուներ շինել թղթերով, երբեմն փայտէ ձիուն համար ծածկոց մը կարել և վերջապէս երբեմն ալ կառապանութեան պաշտօն կատարել քեռորդուն մէջքէն չուան մը անցընելով և ձեռքը խարաղան առնելով: Այս վիճակին մէջ էր օր մը խնդալով վազելով և շունչը կտրած երբ Կանեփեան իր ծանր կերպով մտաւ ներս. Սաթիւնի երկու ձեռքով երեսը ծածկեց զաւել տական կերպով, բայց մատերուն մէջէն կը նայէր զիմացիին. — Օրիորդ, ըսաւ Կանեփեան, կը տեսնեմ թէ լաւ մայր պիտի լինիք: — Սաթիւնի բացաւ երեսը որ աւելի կարմրած էր, թաշկինալով սրբեց ձեռքը ուր նշաններ մնացեր էին չուանը քաշելէն, և պատասխանեց.

— Եթէ միայն այս լինէր մօր գործը . . . :

— Ասով կ'ըսկիւր և ուրիշ գործերով կը շարունակէք, կ'ուզէք աւելի դժուար մասն ալ կատարել . . . :

Այնպէս երեցաւ Սաթիւնիին թէ նորա անտարբեր և երբեմն նաև խիստ ձայնն այդ միջոցին քաղցր էր և ինք բարեկամի մը պէս կը նայէր իրեն, հօր մը պէս գրեթէ, համողութեամբ որ նա ևս պէտք է սիրտ մը ունենար. միայն այնչափ կասկածոտ էր իր վերջի զիպուածէն ի վեր, որ չէր ուզեր հասկընալ, ըսաւ.

— Եւ ո՞վ առաջնորդէ ինձ . . . :

— Բնականաբար ես, կ'ընդունիք:

— Այո՛, այո՛, ըսաւ կամաց ձայնով և նորէն կարմրելով: —

Բայց փոքրիկ Տիգրանը կը բարկանար,

— Ե՛հ, հիմա՛ բաւական է, վազէ:

Նոյն միջոցին քովի խուցէն ոտքի ձայն մը կը լսուէր, Սաթիւ-

նիկ կը գրկէր տղան, առանց զգալու թէ բաւական ծանր է, կը վախճէր միւս կողմը և կ'անհետանար: Իսկ տանտիկինը մտնելով սրահը նայելու թէ ո՞վ կը խօսէր, կը գտնէր Կանեփեանը՝ որ Տիգրանին խարաղանը և չուանները կը ժողվէր դետնէն:

ԺԱ.

Կարելի է ըսել որ մարդու՝ մանաւանդ կնոջ կեանքն երկու մասի կը բաժնուի ամուսնանալէն առաջ — և վերջը: Այս երկու մասին տարբերութիւնը կնոջ համար աւելի զգալի է: Աղջկան առջև պիտի պարզուի նոր աշխարհը մը, որ այդ մարդուն սովորաբար աւելի ծանօթ է. աղջիկը գրեթէ միշտ պիտի տեղափոխուի ուրիշ տան և ուրիշ ընտանիքի մէջ (բնական է թէ խօսքս Արեւելքի համար է) աղջիկը պիտի թողու իրեն սիրելի շատ սովորութիւնք, բնութիւն դարձած վարժութիւններ, մինչ այլը կրնայ ապրիլ ինչպէս որ ուզէ:

Այս տեսակ մտածութիւնք խառն և անորոշ կ'անցնէին Սաթիւնի մոքէն:

Ահա դարձեալ նա իր տունն է ուշ ատեն, իր սղտի սենեկին մէջ երկու սնտուկ կան մէկ կողմ՝ դրուած, մէկը արդէն պատրաստ և կը պուած՝ միւսը բաց և կիսով լցուած. իր պատուհանին քովէն երբեմն թռչուններ կ'անցնին ճճըւալով՝ հաւանաւ կան է թէ ըսելով «գարունը եկեր է» երբ նոյն միջոցին մանուշակներու հոտը մինչև վեր կը բուրէ: Սաթիւնի կը բանայ՝ կը տարածէ ձերմակ մետաքսէ հագուստ մը՝ իր պսակի զգեստը՝ կիտրոնի աւանդական ծաղիկներով զարդարուած, ճաշակի և համբերութեան գլուխ գործոց մը. տեսնողը պիտի կարծէր թէ Բերայի գաղղիական խանութի մը մէջ կարել տրուած է, բայց ոչ, մայրը և քոյրը կարեր են, ոչ միայն խնայողութեան, այլև մօրը սկզբունքին համար՝ թէ իրենք կարող են կարել թէ այդ օժիտը պէտք է ամբողջապէս իրենց ձեռագործն լինի: Եւ ինք Սաթիւնի ալ լաւ աշխատեր էր, միայն թաշկինակներու տառեւ.

որ և ձերմիկէնի մանրանկար ծաղիկները բաւական աշխատութիւն էին: Ամեն օր՝ առաւօտանց մինչև մթնելը բաներ և կարեր էր. իսկ կիրակի օրերը հանգչեր էր Աստուծոյ պատուէրին համեմատ և իր նշանածն ընդունէր էր: Այդ ձերմակ զգեստը երբ հագեր էր վորձեւու համար, մէկ քանի հիւր տիկնանց ներկայութեամբ, սքանչացման ձայն մը միայն լսեր էր, «Ո՛հ, հրեշտակի պէս է»: Եւ ինք, այն անձնասիրութեամբ որ յատուկ է գեղեցիկներու, այս սքանչացումն բնական բան մը գտեր էր. իրաւ է որ հրեշտակները միշտ ոսկեգոյն մազերով և սպիտակ հագուստներով կ'երևակայենք: Քիչ մը նայելէն վերջ զգեստին, ծաղեց կամաց կամաց, յետոյ նայեցաւ չորս կողմը : Այս տեղ իր անկողինին մօտ ց տարի առաջ ուրիշ անկողին մը կար, իր քրոջ անկողինը, վերջը՝ այդ վերուցեր էին, մնացեր էր ինք մինակ. իրեն այնպէս կ'երևէր թէ իր խցիկին ամեն առաւելաները բարոյական նշանակութիւն մը ունէին և թէ այն սղտիկ բարձր նաև որու վրայ ամեն իրիկուն կը ննջէր՝ դիտէր թէ ինչ ցնորքներ կային իր գլխուն մէջ և ինչ երազներ կ'անցնէին աչքին առաջէն: Խնդրեր էր մօրմէն որ իր սենեակը՝ որուն ոչ ոք պէտք ունէր, պահէ դարձեալ նոյնպէս, որպէս զի հոն հիւր գայ. և այս հիւր բառին կը ժպտէր տխրութեամբ. հիւր գալ, ուր, իր հօրը, իր մօրը, իր տունը:

Գնաց գրասեղանին դիմացը, որուն կանաչ չուխան բաւական հինցած էր. ինչչափ դասեր պատրաստած էր անոր վրայ կրթնած, երբեմն զբաղելով և գրեթէ զուարճանալով, երբեմն յօրանջելով և աչերը շփելով: Բացաւ դարակները. հին տետրակներ մէկ կողմ դրաւ, վերջը՝ ընտանեկան նամակներ՝ մէկ երկու իրեն սիրելի հատորներ, ապա մը ազգականաց պատկերներու, և այլն. այդ ամենը զգուշութեամբ դրաւ սնտուկին մէջ առանց բան մը ձմրթ կելու: Կը մթնէր. պատուհանը դոցեց և ճրագ մը վառեց: Վերջապէս դարակներու մէկուն մէջէն առաւ թուղթ մը մաշած և ծալքերուն տեղը պատուած. այդ, միակ նամակն էր որ ստացած էր Գեղարդեանցէն. երկայն ատեն նայեցաւ վրան այն տխուր աչքով, որով աւերակի մը կը նայի

մարդ. վերջը, ըստ ինքնիրեն խօսելով. «Ընեմ ինչ որ ուզեր է ինք» մօտեցուց թուղթը ճրագին. սև մոխիրը կը թափէր և իր ձեռքը պզտի ձեռմակ ծայր մը մնաց միայն. «Ըննցաւ ուրեմն» ըսաւ նորէն, և յիշելով նամակին բառերը «անցեալէն հետք մը չմնաց» . . . մտածեց նորէն և աւելցուց. «չէ, հետք մը կը մնայ. կարծեմ կին մը երբեք չմոռնար այն մարդը՝ որուն համար առաջին անգամ իր սիրտը բարախած է: Միայն, իրաւ ըսեր է թէ «Մեզմէ ոչ մէկը պիտի իմանայ թէ ինչ եղաւ միւսին կեանքը:»

Ժ.Բ.

Երեք տարիներ անցան. Մաքրուհի այս նամակը կ'առնէր իր քրոջմէն որ գացեր էր ամառուան մէկ մասն Զուեցերի անցընելու և միանգամայն Եւրոպա ճամբորդելու ամուսնոյն և երկու տարու տղուն հետ:

«1870. Յուլիս — Վեննա»

«Միրելի քոյրս, Շտապելով կը գրեմ քեզ այս նամակս, որպէս զի այս օրուան թղթատարով կարենամ զրկել. մի սպասեր որ մայրաքաղաքիս կամ ուրիշ ո՞ր և է տեղի նկարագիրն ընեմ քեզ, միայն կին մը պիտի ջանամ նկարագրել:

«Ուրեմն իրաւ է եղեր առածը թէ «Լեռներն իրարու չեն պատահիր, բայց մարդիկ կը պատահին»: Մի և նոյն պանդոկին մէջ՝ ուսկից հիմա կը գրեմ, երէկ նոր հասած՝ կը ճաշինք հասարակաց սեղանին վրայ. կերակուրէն վերջը, երբ ունայն կ'երթալին քովի սրահները, ունայն իրենց սուրճը կը խմէին, Լեռն ինձ հետ կը խաղար. կին մը միւս բազմոցին վրայ նստած էր. ուշադրութեամբ կը նայէր մեզի. ես ալ իրեն կը նայէի երբեմն, վասն զի իր սև աչքերը և թուխ կերպարանքը աչքի կը զարնէին այդ ձերմակ մարդկանց մեծամասնութեան մէջ: Շատ կարելի է որ մենք բաւական սեպէինք իրարու նայիլ հեռուէն, բայց այդ տիկինը մոխրագոյն գլխոտ մը հագած էր փայլուն ծոպերով, որ իմ

տղուս ճաշակին կ'երևի թէ յարմար էին. տունց երկայն արաբողովեան դնաց անոր քով և սկսաւ ծոպերը քաշել: Այն ատեն տիկինը հայերէն խօսեցաւ Լեռնի հետ՝ մերիչէն տարբեր, բայց ինձ լաւ ծանօթ բարբառով մը . . . կովկասեան բարբառով . . . կ'երևակայեմ թէ ով էր այդ կինը. կը գուշակեմ թէ Տիկին Գեղարդեանցն էր . . . ինք գեղեցիկ չէ. բայց պէտք է խոստովանիլ թէ (կը զիտեմ որ «պէտք է խոստովանիլ» կ'ըսեմ) որ երբ կէս ժամ մը խօսիս կը մոռնաս թէ գեղեցիկ չէ, և այն ատեն սիրուն է նաև: Միայն երբ բան մը կ'ըսէ՝ այնպէս կը կարծէ որ ամենը պէտք է իրեն համակարծիք լինին. հետը վիճելու համար ո՞ր և է նիւթի մը համար հարկ է լաւ փաստաբան լինիլ: Բայ ի իր փայլուն ծոպերէն, որ այնչափ դրաւեցին իմ Լեռնս, իր հագուստը պարզ էր, և թէ իր մազերուն սանտրուածքէն՝ թէ հասարակ գլխարկէն յայտնի էր այն կիներէն լինիլն որ պաճուճանքը կ'արհամարհեն և կը հագուելն միայն ծածկուելու համար:

«Կ'ուզեմ հիմա որ իրմէ առած լուրերս քեզ հաղորդեմ. նախ՝ Գեղարդեանց դարձեալ Մոսկուա է, ուր համալսարանի մէջ կը դասախօսէ, նոյնպէս և առաջին դասեր կու տայ. երկրորդ՝ զաւակ չունին — դոնէ դեռ մինչև հիմա — երրորդ՝ կինը Եւրոպա և գլխաւորապէս Գերմանիա կը ճանապարհորդէ աղջկանց դպրոցներու վիճակը և դրութիւնը ուսումնասիրելու համար . . . վերջապէս, իմ սիրելի Մաքրուհիս, ահա ընտանիք մը՝ որ ինչպէս կ'երևի՝ պաշտօն ստանձներ են մեր զաւակները և՛ Աստուծով՝ մեր թոռները նաև դաստիարակելու . . . :

«Նս որ չուտ պիտի զրկէի նամակս՝ այնչափ երկայն գրեցի. ժամանակ նաև չկայ ըսելու որ քեզ շարունակ ամեն տեղ կը յիշենք. կը համբուրեմ քեզ և քուկիներդ . . . : Յետևութիւն:

«Քոյդ ՍԱԹԻՆԻԿ»

Գեղարդեանցի մաղձոտութեան մէկ օրն էր. դարձեալ այս աշխարհքս իր սև և մութ կողմէն կը տեսնէր և ինքն ալ այն կար-

ծիրքէն էր թէ՛ «ինչո՞ւ մեռնիլ — կը հասկընամ. ինչո՞ւ ծնիլ — չգիտեմ»:» Բաւական ժամանակ էր որ իր կնոջմէն ալ նամակ չէր առեր, և այդ կը նեղացընէր զինքը. քանի որ էր կ'ըստաւէր, և մաղձոտութիւնը քիչ մը վարատեցաւ երբ մեծ ծրար մը բերին իրեն իր կնոջ ձեռագրով: Մէջը զանազան դպրոցներու ուսմանց ծրագիրներ կային, յոգնած նայուածքով մը զննեց անոնք. իր կերպը կարծես կ'ըսէր. «ամենն ալ գիտեմ, չկարդացած կրնամ իմանալ թէ ինչ են»: Սխաւ կարգաւ նամակը. մանրամասն տեղեկութիւն կու տար դարձեալ իր այցելած դպրոցական հիմնարկութեանց վրայ, և թէ որոնք կարելի էր օրինակել մեր ազգին համար՝ անշուշտ աւելի նեղ շրջանի մէջ և խնայողաբար. և նորէն հալիւներ կային տարեկան ծախքերու և եկամտաներու: Իր գրութեան ձեւէն կ'երևէր որ ինք պատրաստ էր գործելու՝ աշխատելու՝ իր կեանքը անցընելու դաստիարակութեան զբաղմամբ՝ բայց միշտ զիտնալով թէ երբ պզտիկ աղջիկ մը մէջ մեր անձն կը նուիրենք հասարակաց գործի մը, աշխատողներու առաջինը լինելով, մեր անունը իր պարծանքը կ'ունենայ: — Նա նախը օրագրութիւն մ'էր որ այսպէս կը վերջանար.

« Կը մոռնայի քեզ ըսելու թէ հայ՝ պօլսեցի ընտանիքի մը պատահեցայ. և իրաւ մեծ հաճութիւն զգացի. օտար տեղ՝ ինձ համար անորոշելի է միշտ հայի մը պատահիլ: Հայր, մայր և փոքրիկ տղայ մը. տղան բոլորովին մօր նման էր. մանաւանդ որ մայրն ալ դեռ քիչ մը տղայ երեցաւ ինձ իր երկայն ծիծաղներով և թարմ երեսով. տիկին Սթիւնիկ Կանեփեան մը որ աչքերը լաւ բացած երեսս կը նայէր հետաքրքրութեամբ և հազար հարցմունք կ'ընէր. թէ իմ ամուսինս ի՞նչ կ'ընէր, թէ զաւակ չունէի՞, թէ ինչպէս միտակ ճամբորդութիւն կ'ընէի, թէ անպատճառ ո՞ր և է նպատակ պէտք էր ունենալ կին մը ինք իր զլխուն քաղաքներ չափելու համար: Թութակի մը պէս կը խօսէր և իր տղուն հետ ժամանակ կը դռնէր խաղալու նաև: Իր հարցմունքներէն քաջալերուած՝ ես ևս տեղեկութիւն հարցուցի և իմացայ որ ինք՝ երբեմն Օրիորդ Պերճեան՝ հիմա արդէն

երեք տարի է որ ամուսնացեր է, թէ իրենք իրենց հաճոյքին համար կ'ուղևորին, թէ ինք չատ գոհ է և Եւրոպիոյ հրաշալիքներն տեսնելով սքանչացած և ապաւած: Թէև ուրիշներուն համար հետաքրքրելի էր, բայց գոնէ իր վիճակը և զգացմունքներն տեղն ի տեղ կը պատմէր: Իր ձեւերուն և խօսքերուն մէջ ևս տեսակ մը թեթևութիւն գտայ. միշտ ունիմ այն կարծիքը — կամ ըստ քեզ նախապաշարմունքը — թէ պօլսեցիք թեթև են: Բայց այնպէս մաքուր հայերէն մը կը խօսէր և այնպէս քաղցր կերպով որ միւս բաները ներեցի: Իսկ իր ամուսնոյն համար չեմ կրնար ըսել որ թեթև է. տեսնելով իր կնոջ հետ ծանօթանալ՝ կատարեալ քաղաքավարութեամբ, բայց և կատարեալ անտարբերութեամբ զիս բարեկեց, լրագիր մը առաւ՝ մէկ կողմ նստաւ և գրեթէ բոլոր մեր խօսակցութեան ժամանակ կարդաց, մինչև որ տղան գնաց և զինք ընդմիջեց:

«Իսկ դու ի՞նչ կ'ընես, կը շարունակեմ՝ առաջ կը տանի՞ս քու պատմական քննութիւններդ, քանի՞ հատոր պիտի լինի զիրքն և ի՞նչ է անունը. պէտք է որ ես մօտդ լինիմ և հանդիստ չտամ որպէս զի աշխատիս: Կը մաղթեմ քեզ առողջութիւն և յաջողութիւն:

«ԳՈՒ ԿԻՆԴ՝ որ կը հաւտայ Գեղ:»

Երբ Գեղարդեանց կարդաց նամակը, առաջին մտածութիւնն եղաւ Սթիւնիկի երջանկութիւնը՝ և զաւակը որ իրեն կը նմանէր և «երկայն ծիծաղները»: — «Ուրեմն բարեբաղդ է» ըսաւ, և նորա երջանկութեան գաղափարը խզի խայթէ մը ազատեց զինք, թէև անբացատրելի տխրութիւն մը կ'ըզգար . . . նորէն նայեցաւ նամակին. «իմ կինս կը հաւտայ ինձ, մտածեց, այո՛, այս միայն պէտք է. հաւատալ Նախախնամութեան մը, հաւատալ ապագային կամ ուրիշ ո՞ր և է նպատակի, գոնէ մեզ նման մէկուն հաւատալ — այդ միայն կրնայ փրկել մարդս, այդ միայն կրնայ ազատել յուսահատութենէ:

ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆՔ

Մ. ՄԱՄՈՒՐԵԱՆԻ

ՄԷՏԵՊԵՆ 20 շԽԱՆ

Զատիկ (վ. օլթէն)	5	
Ֆիլոսոֆ	5	
Միքիմ-Միքիմ, Ժանո և Քոլեն, Ճերմակ ու Սև (վ. օլթէն)	4	
Վերթէր (կէօթէ)	8	
Մենաստանի աղօրին (Տ. Պոմոն)	5	
Սէվիլի սալորին (Պոմարէ)	5	
Գաղտնիք Բարիկի (Լոթէն Սիւ) 8 հարս	96	50
Հազար ու մէկ դիւերներ, 6 »	74	50
Երեք Հրացանակիրք (Ս. Տիւմա) 5 »	56	
Քսան տարի ետք » » 4 »	46	50
Պրաթլոն դերկոմս » » 12 »	115	
Ամօրի » »	16	50
Իվանոէ (վ. Սքոթ) 5 հարս	29	
Անիծեալն (**Սքոթ) 4 »	58	25
Ամուրիի մը երազները (Իք. Մարվէլ)	6	50
Աշխարհի շրջանն ու թառն օրուան մէջ (Ժ. Վէրն)	12	57
Խորհրդաւոր կղզի (Ժ. Վէրն) 5 հարս	28	
Մանկիք (Շանֆլէօրի)	9	25
Սիւլերիականի մը յիշատակք (Ժ. Վլադիմիր)	8	
Հայկական նամականի (վրոյր)	12	25
Մանր վէպեր ու դասեր տղոց համար	7	
Բանալի հայերէն շարադրութեան, Սպասում		
Գիտելիք և պարտիք տղոց, Բ. Կիւլ	5	
Ընդհանուր Պատմութիւն համառօտ, Մանն Ս. Սպասում		
» » » Մանն Բ.		
» » » Հարս Բ.		
Նոր Ընթերցարան, Բ. Կիւլ	4	75
Անկլիական Նամականի Կաճ Հայու մը ճակատագիրը	20	
Արեւելեան Մամուլ, 15 հարս 1871—1885	520	
Համառօտ պատմութիւն Բնական Գիտութեան (Ս. Պլաթոն)	10	
Տունէն դուրս. Թատրոն	5	

ՀՀ Ազգային գրադարան



NL0332650

